Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

9(47.925)
Д-30

1797

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в срок, чтобы и другие могли воспользоваться ею.

9(47.925)
Ջ-30
5 OCT 2011
Ջ-32

ԳՐԻԳՈՐ ՋԱՆՇԵԱՆ

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ

ՌՈՒՍ ԱՄՍԱԳՐԵՐԻՑ ԵՒ ՕՐԱԹԵՐԹԵՐԻՑ
ԹԱՐԳՄԱՆԵՑ
ԳԷՈՐԳ ՔՍՀ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
1902

22 MAR 2013

14281

Дозволено цензурою. С.-Петербургъ, 21 Августа 1902 года.

1797
41

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.

ԳՐԻԳՈՐ ՋԱՆՇԵԱՆ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Այն, ինչոր Գրիգոր Ջանշեան արեց որպէս անհատ, դրա փոխարէն՝ ամբողջ հայ ազգը ոչինչ չարեց այդ արժանաւոր մարդու յիշատակին։ Բաւական չէ, նրա սկսած ռուսա-հայ որբանոցների գործը թուլացաւ մեր դանդաղկոտութեան շնորհիւ, այլ և նրա տաղանդաւոր գրուածքներից ոչ մէկը հայ թարգմանութեամբ չունինք ժողովդին։ Անձեռնահաս եղանք մինչև անգամ նրա լիակատար կենսագրութիւնը տալ հայ ընթերցողին. այնպէս որ մեր հասարակութեան մի մասը միայն լրագրական համառօտ տեղեկութիւններով է ճանաչում նրան։ Կայ և մի մասը, այն էլ մեծ մասը, որ ամենևին չէ ճանաչում նրան։

Այն ինչ ժողովրդի բարեկամը ժողովրդի յիշողութեան մէջ պիտի ապրէր լիովին։

Ահա այդ պակասը մասամբ և ժամանակաւորապէս լրացնելու համար՝ ձեռնարկեցինք թարգմանաբար լոյս ընծայել այն յօդուածների մեծագոյն մասը, որոնք իր ժամանակին լոյս տեսան գլխաւորապէս մայրաքաղաքների ռուս մամուլի մէջ և մեծ լոյս սփռեցին Գր. Ջանշեանի կեանքի ու գործունէութեան վրա։

Անպատրաստ լինելով հանգուցեալի բազմարդիւն գործունէութեան և կեանքի նկարագիրը տալ, կամեցանք, որ մեր այս վաստակը առժամանակ նրա կենսագրութեան տեղը բռնի և միևնոյն ժամանակ ծառայի որպէս նիւթ Ջանշեանի ապագայ հայ կենսագրի համար։ Այդպիսի կենսագրութիւնը միշտ ուսանելի է և ընթերցող հասարակութիւնը սպասում է։

Գ. Ք. Մ.

9104

«Որ մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եԹող»:

Խորենացի Գ. Գլուխ 67

Հայկական մեծ մարդոց գերեզմանոցում աւելացաւ մի շիրիմ ևս: Անցեալ 1900 Թուի յուլիսի 17-ին Մոսկւայում յանկարծամահ եղաւ ռուս գրական ասպարիզում մեծ հռչակ ստացած՝ տաղանդաւոր հրապարակախօս և հասարակական գործող Գրիգոր Աւետիսեան Ջանշեանց՝ 49 տարեկան հասակում: Հանգուցեալը ծնուեց Տփխիսում 1851 Թուին: Սկզբնական ուսման ընԹացքը որպէս կովկասեան որդեգիր աւարտելով Մոսկւայի Լազարեան ճեմարանում, նա մտաւ նոյն քաղաքի համալսարանի իրաւաբանական բաժինը, ուր 1874 Թուին աւարտեց իրաւաբանի կոչումով և այնուհետև իր ոյժերը նուիրեց ռուսաց գրականուԹեան: Գրիգոր Աւետովիչը լինելով տաք հարաւի զաւակ և կովկասեան ազատ լեռների որդի, 60 ական Թուերի ռուսական ազատարար շարժումները բուռն արձագանք գտան նրա զգայուն հոգու և կրակոտ բնաւորուԹեան մէջ: Նոր մտքերի շարժումով ոգևորուելով, նա մեծ բաւականուԹիւն զգաց զբաղել այդ շրջանի իրաւա-պատ-

մական գրականութիւնով և փայլուն ընդունակութիւններ ցոյց տուեց ուսումնասիրելու ազատարար Աղեքսանդր Բ. Թագաւորի մեծ ռեֆորմները և պաշտպանելու այդ բարենորոգումների հարցը ժամանակակից հակառակորդների դէմ։ Միենոյն ժամանակ իր կրակոտ, վերին աստիճանի կենդանի գրչով այդ բարենորոգումների բարերար նշանակութիւնը հասկացնող, ժողովրդականացնող ու տարածող եղաւ լայնածաւալ Ռուսաստանում։ Իսկապէս ի՞նչումն էր կայանում Ջանշեանի դերը՝ բարենորոգումների խորհուրդը հասկացնելու և ժողովրդականացնելու գործում։ Ահա թէ ինչում։

Մեծ բարենորոգումները մի խոր, անանցանելի անդունդ բաց արին մինչև բարենորոգումները և բարենորոգումների պտուղները վայելող Ռուսաստանի մէջ։ Առաջնի հասարակական և տնտեսական կազմակերպութիւնը հիմնուած էր ճորտութեան սկզբունքի վրա։ Անհատը, նրա մարդկային արժանաւորութիւնը և իրաւունքները դրուած էին բացասական սկզբունքի վրա։ Իսկ բարենորոգումների ազատարար բնաւորութիւնը նրանումն էր կայանում, որ անհատը ազատուեց պետութեան և արտօնուած դասակարգերի միահեծան տիրապետութիւնից։ Ճորտութեան անկումով՝ 23 միլիոն ստրուկ ժողովրդին անհատականութեան և աշխատանքի ազատութիւն շնորհուեց և ստրուկ Ռուսաստանը ազատ Ռուսիա դարձաւ։ Եւ ահա այդ խորխորատի վրա կամուրջ ձգողը, երկու վերև յիշուած գրութիւնները բացատրողն ու հասկացնողն եղաւ մեր

հայրենակից Գր. Ջանշեան իր հետևեալ գրական արժէք ունեցող աշխատութիւններով — «С. И. Зарудный и судебная реформа». «Страница въ исторіи судебной реформы». «Веденіе неправыхъ дѣлъ». «Основы судебной реформы» և վերջինը — «Изъ эпохи великихъ реформъ» հաստահատոր հրատարակութիւնը, որ կարճ միջոցում եօթ հրատարակութիւն ունեցաւ և որպիսի աշխատութիւնը վերջնականապէս փայլեցրեց Ջանշեանի աստղը ռուս հռչակաւոր գրական աստղերի համակարգութեան մէջ և նրա տաղանդի անունը այլ ևս չիջաւ ասպարէզից, այլ աւելի և աւելի հռչակ վայելեց և նրա բեղմնաւոր գրիչը աւելի և աւելի ոյժ ստացաւ, անընդհատ տալով ռուս նշանաւոր օրագրերում և ամսաթերթերում իմաստալից ուսումնասիրութիւններ դատաստանական բարենորոգումների շրջանից։ Բացի դրանից նա գրել է «По Европѣ» և «Перлъ Кавказа» ճանապարհորդական նկարագիրները։ Հանգուցեալի տաղանդաւոր յօդուածներից շատերը տպուած են նաև ռուս առաջնակարգ «Русскія Вѣдомости» լրագրում, որի եռանդուն աշխատակիցն էր նա, որի հետ 20 տարուց աւելի կապել էր իր գրական գործունէութիւնը և որի հրատարակիչ խմբագիրներից մէկն էր։ Եւ ահա այդ մարդը այլևս չկայ։ Նրա մահը անկեղծ վիշտ և արտասուք պատճառեց ռուս մամուլի սակաւամարդ ընտանիքին։ Այլ կերպ էլ չէր կարող լինել։ Նրա անունը կապուած էր այնպիսի մի լուսաւոր ժամանակաշրջանի հետ, որ կոչւում է

մեծ բարենորոգումների մեծ շրջան։ Անմոռանալի շրջան։

«Եկատերինէի դարի երգիչ Դերժաւինը դառնալով Մեծն Եկատերինէին, ասել է — Դու փառքով, ես ստուերով կապրեմ—։ Նոյն խօսքերը կարող էր կրկնել Ջանշեանը, ոչ միայն մի հերոս անձնաւորութեան առաջ, այլ հերոսական գործերով լիք մի ամբողջ ժամանակաշրջանի առաջ — մեծ բարենորոգումների ժամանակաշրջանի առաջ», որի միակ երգիչը հանդիսացաւ նա իր ուժեղ, տաղանդաւոր և բանաստեղծական աւիւնով օժտուած գրչով։ Իսկ թէ ի՞նչ ոյժ ունէր նրա գրիչը, դրան ապացոյց է այն, որ նոյն իսկ ռուսները Ջանշեանին անուանեցին «60 ական թւականների խուդոժնիկ, պօէտ»։ Իսկապէս զգացմունքների մի հեղեղ էր հոսում նրա գրչից։ Այնքան բուռն ոգեւորութեամբ, կենդանի, բանաստեղծօրէն էր գրում ու պատկերացնում նա, որ ձեր կամքի հակառակ դուցէ, ձեզ կապում, տանում էր իր հետ, անհամոզելին համոզելի էր դարձնում։ Գրիչը նրա ձեռքում մի անյաղթելի զէնք էր, որով անդիմադրելի կերպով առաջ էր տանում ազնուութեան, ճշմարտութեան և արդարադատութեան սկզբունքները։ Նա այդ զէնքով քառորդ դար օրէցօր անձող եռանդով կռւում էր իրաւունքի, արդարադատութեան և մարդկային ամենաբարձր, վսեմ իդէալների պաշտպանութեան համար, ուստի և «մարտնչող հրապարակախօս»ի գրական անուն վաստակեց։ Եւ տարաւ յաղթանակը։

Այդչափ գնահատելի ծառայութիւններ անելով ռուս գրականութեան և ռուս ժողովրդին, նա չմոռացաւ և իր պարտականութիւնները դէպի մի տառապեալ ազգ, որին պատկանում էր իր ծագումով։ Այո, նա ռուսական ճշմարիտ քաղաքացի լինելով հանդերձ, ցոյց տուեց, որ ինքը անկեղծ հայ էր և նրա զգայուն սիրտը ճմլւում էր այն անգթութիւնների և սարսափների տակ, որոնց ենթարկւում էին իր ազգակիցները Տաճկաստանում։ Իր ազգի վիշտը իր վիշտն էր, իր ազգի ուրախութիւնը՝ իր ուրախութիւնը։ 1891 թւին, երբ նոր բարձրանում էր տաճկական սարսափների ուրագանը, երբ մահմեդական արիւնածարաւ հազարգլխեան վիշապը նոր շարժում էր իր գլուխը, ո՞վ չէ յիշում, որ Ջանշեանը իբրև «Русск. Вѣдомости»ի թղթակից, արծուի նման սլացաւ սուլթանների մայրաքաղաքը — Պօլիս և այնտեղից բարձրացրեց իր բողոքը տաճկական անարդարութիւնների դէմ, տիրող բռնակալական կարգերի դէմ, իր կրակոտ և ջախջախող նամակները տպագրելով յիշեալ լրագրի էջերում։ Սրանով չբաւականացաւ։ 1895-ի Սասունի դէպքերից յետ Ջանշեանը հրատարակեց մի համակրելի ժողովածու՝ «Положеніе Армянъ въ Турціи» վերնագրով, ուր տեղաւորելով դարավերջին մեծ մարդասէր Գլադստոնի հայերի մասին յայտնի ճառը, եւրոպացի գրողներ և ճանապարհորդներ՝ Րօլէն-Ժեկմէնի, Մակհօլի, Գրինի, Էմիլ Դիլլոնի և իր «Հայոց հարցը Տաճկաստանում» գրւածները, կամեցաւ «ռուս հասարակութեան կարելի չափով բազմակողմանի և

անաչառութեամբ ծանօթացնել տաճկական լծի տակ մաշւող հայերի դրութեան և տանջանքների հետ»: Համձարեղ հրապարակախօսը այդ ժողովածուով հարցը յանձնեց ռուս հասարակութեան դատաստանին և մասամբ դատը շահեց, որոշ չափով զարթեցնելով ռուսների համակրանքը դէպի հայերը և որոշ հող պատրաստելով ապագայում փոխելու հայերի մասին նախապաշարուած և սխալ կարծիքը Ռուսաստանում:

Այնուհետև վրա հասան տաճկական իսկական սարսափները — մեծ, ընդհանուր կոտորածը: Երբ ամէն բան վառօդի ծխի և արիւնի մէջ շաղախուեց, երբ երկիրը մարդկային գազանութիւնների մի ահռելի սպանդանոց դարձաւ, երբ «կարմիր Սուլթանը» կարմիր վարագոյրի ետև թաղեց իր աշխարհը, երբ հարիւր հազարաւոր խաղաղ բնակիչներ դուրս վիժուեցան իրանց բնիկ աշխարհից, մի հարիւր հազար էլ արիւնազոր ընկան տաճկական սրից, երբ այդ նահատակ-մարտիրոսների 50 հազարաւոր անտէր որբիկները փողոց շպրտուեցան սովամահ լինելու վտանգին ենթարկուելով և երբ այդ սարսափների տակ ամէն կեանք, շարժում դադարեց, երբ անկարելի եղաւ կատարուած թշուառութեանը որևէ կերպով օգնութեան ձեռք կարկառել, երբ ամէնքս յուսահատ ու շւար առանց ելք գտնելու՝ արցունք էինք թափում, երբ ցնորք դարձաւ սրան ու նրան աղերսել, մէկից մի օգնութիւն մուրալ, սպասել և երբ շատերս էլ արդէն անտարբերութեան, սառնութեան ախտին մատնուեցանք, ահա այդ օրհասական

ծանր ժամերին Ջանշեան նորից երևաց: Կատարուած զարհուրանքից և սարսափներից չսարսեց և չյուսահատուեց նա և այդ արիւնի ու տանջանքի միջից իր հեղինակաւոր ձայնը բարձրացրեց: Այդ ձայնը սթափեցնող էր: Այդ ձայնը եղբօր օգնելու հրաւէր էր, որ նա անում էր իր գրչի զինակից ռուս արդի գրականագէտներին և նրանց միջնորդութեամբ ռուս ժողովրդին, եղբայրաբար օգնելու խաչի նահատակ մի ժողովրդի, որ օր ցերեկ սովամահ էր լինում և սրակոտոր ջնջւում էր երկրի երեսից: Եւ լսեց այդ հուժկու ձայնը: Լայնարձակ Ռուսաստանի բոլոր ծայրերին արձագանք տուին մարդասէր կոչին: Ջանշեանի շուրջը խմբուեց ժամանակակից ռուս երկրի մտածող երիտասարդութիւնը և բարձր իդէալներով ոգևորուած հրապարակախօսների մի համակրելի շրջան, որոնք իրանց կողմից ձայն բարձրացրին մի նահատակ ժողովրդի դատը պաշտպանելու և բողոքելու այն զարհուրելի անարդարութիւնների դէմ, որ կատարւում էր 20-րդ դարի շէմքում: Այդ համախմբումի հետևանքն եղաւ այն, որ Ջանշեանի խմբագրութեամբ Մոսկւայում հրատարակուել սկսեց «Братская помощь» վերնագրով մի հաստահատոր՝ 1000 երեսից բաղկացած գիրք, որ իր նմանների մէջ իր գրական արժանաւորութեամբ եզակի գիրք գրուեց: Այդ ժողովածուն ոչ միայն նկարագիր էր տաճկական սարսափների ու գազանութիւնների, այլև բովանդակում էր կտորներ հայի անցեալից և ներկայից, պատմուածքներ հայ հերոսների, մեծ մարդկանց կեանքից. իսկ Փայեալ

մասը զուտ գրական և ուսումնական յօդուածներ ու բանաստեղծութիւններ էին։ Պակաս լրացնում էին զանազան մեծ մարդոց, վանքերի, տեսարանների և հայ գաղթական խմբերի՝ ճաշակով պատրաստուած նկարները, որոնք ժողովածուի ընդհանուր կազմակերպութեամբ համ ու հոտ էին մատակարարում։ Ռուս երիտասարդ հրապարակախօս Գօլմստէյմ յիշեալ ժողովածուն այսպէս է բնորոշում. «Այդ գիրքը սիմֆօնիա է։ Դա լի է բանաստեղծութիւնով, գոյներով, գաղափարներով, բարութեամբ, աշխատութեամբ և մարդկային արժանաւորութիւններով։ Դա տիրաբար ներս է թափանցում հոգու մէջ, այնտեղ հնչում է գեղեցիկ ակկորդներով և ոգեւորութիւն է առաջացնում։ Այդ ժողովածուն մեր ժամանակի փայլուն երեւոյթներից մէկն է, այդ կարծես մի համբաշխարան է , բարութեան մի քրիստոմատիա է։ Այդպիսի գիրքը դաստիարակող է։ Այն րոպէներին, երբ յանկարծ միտքը արտաքին տպաւորութիւններին արձագանք չէ տալիս, մեր գլխում կենդանի իդէաներ յարուցանելու համար արժէ այդ ժողովածուն ձեռքում ունենալ»։ Եւ խորապէս շատ բան յարուցեց դա։ Ոչ միայն պիտանի դարձաւ իբրեւ ընթերցանութեան նիւթ, այլ երկու ազգերի (հայ և ռուս) մէջ համակրութեան, եղբայրութեան կապ հաստատեց։ Նա զարթեցրեց մեռած զգացմունքը և հայը, որ վերջին տարիները իր մի քանի չարչի, վաշխառու անհատների ստորութիւնների շնորհով ատելութեան առարկայ էր դարձել, Ջանշեանի և նրա ժողովածուի միջոցով բարձրացաւ, ժամանակաւոր բանադ-

րանքից ազատեց և անզուսպ բերանները փակեցան։ Թէ որքա՜ն մեծ էր ժողովածուի արժանաւորութիւնը, երեւեցաւ այն ընդունելութիւնից, որ ունեցաւ Ռուսաստանում։ Առաջին հրատարակութիւնը թւով 3600 օրինակ սպառուեց չորս ամսուայ ընթացքում, հրատարակչին տալով նիւթական մեծ օժանդակութիւն — 21000 րուբլուց աւելի զուտ արդիւնք։ Նիւթական արժէքից աւելի մեծ էր գրքի բարոյական արժէքը, որի մէջ երեւեցաւ և Ջանշեանի տաղանդաւոր խելքի մեծութիւնն ու սրութիւնը։ Նա ամէն բարի գործին ձայնակցող իր հոգու անվիճելի կարողութեամբ իմացաւ ըմբռնել ժամանակի անհրաժեշտ պահանջը և ասպարէզ բերեց ամենակարեւոր հարց՝ ռուս-հայկական որբանոցների հարցը, որին և նուիրեց «Братская помощь» գրքի ամբողջ եկամուտը։ Եւ այդպէս հետզհետէ Պօլսի ռուսական դեսպանի միջոցով Տաճկաստան փոխադրեց ժողովածուի արդիւնքից մօտ 60000 րուբլի, որպիսի գումարով սրի և մահուան աշխարհում նոյն դեսպանի մարդասէր կարգադրութեամբ 12 որբանոց բացուեցան։ Ահա այդ որբանոցների մէջ պատսպարան գտան այն հազարաւոր որբերի մի մասը, որոնք մարդասպանների սրերից ազատուելով հանդերձ, ենթակայ էին սովամահ լինելու և խաչի անունով գործող մարդորս միսիոնարների թակարդն ընկնելու երկիւղին։ Այս էր ամենամեծ և անփոխարինելի ծառայութիւնը, որ արեց Ջանշեան իր ազգին, որով և անմոռանալի մի անուն գրաւեց հայ գործիչների և բարերարների շարքում։ Եւ այդ բոլորի համար գրեց

մի հսկայական աշխատութիւն, ցոյց տալով կամքի մեծ ուժ, համբերատար, մարդասէր հոգի, խելքի մեծ կորով, տաղանդաւոր գրողի բեղմնաւոր ընդունակութիւն և անձնազոհ մարտնչողի կամակոր դիմադրութիւն,

Յիրաւի, նրան շրջապատող հանգամանքներում և իրերի ներկայ դրութեան մէջ ռուս հրապարակախօսների շարքերում մի փայլ ու անմոռաց անուն վաստակել, գրչի միակ զէնքով դիմադրել տաճկական ուխններին, իր դրօշակի տակ գումարել ժամանակակից ռուս գրական ուժը, «հաւաքել գրեթէ ամբողջ ռուսաց հիւթը մի նպատակի շուրջը — չթողնել, որ հայհոյանքներով սրբապղծեն այն անթիւ նահատակների յիշատակը, որոնք մեռան իրանց ընտանեաց, ազգի, կրօնի և գաղափարի համար» և միևնոյն ժամանակ գրչի դիւթական շարժումով կտրել կենդանի մնացած բազմաթիւ որբերի արտասուքները, նրանց «մի բաժակ ջուր տալ», այդ մի մեծ բարոյական և գաղափարական արի ծառայութիւն էր, որպիսին միայն կարող էր անել Ջանշեանի նման բարձր, ազնիւ գաղափարներով բռնկած և երկնատուր ձիրքերով օժտուած մի գնահատելի և ուժեղ անձնաւորութիւն:

Իսկ թէ ո՞րպիսի գնահատութեան արժանացաւ Ջանշեան իր գրական և հասարակական ծառայութիւնների համար, այդ ցոյց է տալիս այն ջերմ համակրանքը և սրանց մասնակցութիւնը, որ արտայայտեց ամբողջ ռուս գրական աշխարհը և հայ ժողովուրդը նրա 25 ամեայ գործունէութեան

յոբելեանին, որ տօնեց Մոսկուայում 1899 թիւ Նոյեմբերի 20-ին: Պատկերը աւելի լիակատար անելու համար, այստեղ տալիս ենք յոբելեանի նկարագիրը, արտատպած «Русск. Вѣдомости» լրագրի № 322-ից «Մշակ»ի խմբագրութեան թարգմանութեամբ:

«Նոյեմբերի 20-ին Մոսկուայում կատարուեց Գ. Ջանշեանի գրական. և հասարակական գործունէութեան 25ամեակի տօնը: Յոբելեանի օրը Ջանշեան օրհնութեան կոնդակ ստացաւ Էջմիածնից՝ Վեհափառ Կաթողիկոսից և նամակ Կ. Պօլսի պատրիարգ Օրմանեանից: Առաւօտեան յոբելեարին նրա բնակարանում մատուցեցին ուղերձներ՝ «Русск. Вѣд.» լրագրի հրատարակիչ ընկերների կողմից, Մոսկուայի հայ կանանց կողմից, Նախիջևանի և Վլադիկավկազի հայերի կողմից, Վլադիկավկազի հասարակութեան կողմից և ուրիշներից: Բացի դրանից նա ստացել է 150-ից աւելի գրաւոր շնորհաւորութիւններ և հեռագիրներ Ռուսաստանի զանազան ծայրերից, մայրաքաղաքի և գաւառական մի քանի լրագիրների խմբագրութիւնների կողմից, Ս. Ի. Զարուդնըյի և Վ. Ա. Արցիմովիչի ընտանիքների կողմից, Գ. Պ. Սարիցկուց, Ա. Վ. Օրլովայից, Ա. Մ. Ժեմչուժնիկովից, Պ. Ի. Վէյնբերգից, Վ. Դ, Սպասովիչից, Վ. Ի. Սամարսկի-Բըխովցից, Պետերբուրգի գրականագէտների մի խմբից 42 ստորագրութիւններով. և մամուլի, փաստաբանութեան, դատարանի ներկայացուցիչների և մասնաւոր անձանց կող-

միջ։ Կային նոյնպէս շնորհաւորութեան ողջոյններ զանազան համալսարանների ուսանողների, Թուրքիայից փախած հայերի, հայ աշուղների և ուրիշների կողմից։

Երեկոյեան ժամի 6½-ին «Սլաւեանսկի բազարի» ռուս ապարանքում յոբելեարի պատւին ճաշ տուեց, որին մասնակցում էին մօտ 200 անձինք։ Նրանց թւում գտնւում էին համալսարանի պրոֆէսորներից միքանիսը, փաստաբանութեան և պարբերական հրատարակութիւնների ներկայացուցիչները, զեմստւօի և դատաստանական վարչութեան գործիչները, Մոսկւայի հայոց կոլօնիայի ներկայացուցիչները և Մոսկւայի հասարակութեան տիկիններից միքանիսը։ Ճաշի ժամանակ առաջին ճառը արտասանեց յոբելեարը, որը յիշեցրեց թէ իր յոբելեանը համընկնում է Կայսր Աղէքսանդր Բ-ի դատաստանական կանոնադրութիւնների հրատարակութեան 35ամեակին, մատնացոյց արեց Ս. Ի Զարուդնըյի նշանակութեան վրա դատաստանական րէֆօրմի գործում, որը տոն տուեց նրան և որը 1854 թւի նոյեմբերի 20-ի օրէնսդրական ակտի խմբագիրն էր, և վերջում հրաւիրեց ներկայ եղողներին պատւել Զարուդնըյի յիշատակը ոտքի կանգնելով։ Բոլորը վերկացան իրանց տեղերից։ Դ. Ն. Անուչին ողջունեց Գ. Ա. Ջանշեանին «Русск. Вѣд.» լրագրի խմբագրութեան կողմից, որպէս ռուսաց ժուրնալիստիկայի ամենալաւ ներկայացուցիչներից մէկի, որպէս ճշմարտութեան և արդարութեան գաղափարի ամենաազնիւ և ամենայամառ տարածողներից մէկի,

LENIN adьna Центр. Библиотека №3992 им. ЛЕНИНА

և բաժակ բարձրացրեց այն սկզբունքների ապագայ յաղթանակի համար, որոնց անխոնջ քարոզողն է յոբելեարը։ «Курьеръ»-ի խմբագիր Ե. Ա. Ֆէյգին յոբելեարի կենաց բաժակը բարձրացրեց, որպէս փառաւոր հրապարակախօսի, որ քառորդ դար աւելի և աւելի մեծ եռանդով կռւում էր արդարութեան և իրաւունքի համար։ Վ. Ա. Մակլակօվ ճառ արտասանեց երդւեալ հաւատարմատարների օգնականների կօնսուլտացիայի կողմից, որի մէջ ողջունում էր յոբելեարին, որպէս 60-ական թւականների շրջանի նկարչի և բանաստեղծի։ Այդ ճառից յետոյ կարդացւեցին յոբելեարի անունով ուղարկւած շնորհաւորական հեռագիրները։ Պետերբուրգի երդւեալ հաւատարմատարների նախագահ Տուրչանինովից հետևեալ հեռագիրն է ստացւած. «Պետերբուրգի երդւեալ հաւատարմատարների խորհուրդը ուղարկում է Ձեզ իր ողջոյնը, այն մեծ սկզբունքների անկեղծ և ջերմ ջատագովին, որոնք Կայսր Աղէքսանդր Բ-ի վերանորոգութիւնների հիմքն են կազմում, և շնորհաւորում է Ձեր արդիւնաշատ գործունէութեան յոբելեանը»։ Ուրիշ շնորհաւորական հեռագիրներ և նամակներ ստացւած են Մոսկւայի նահանգական զեմստւօի վարչութեան նախագահ Դ. Ն. Շիպովից, Կօլօմնայի գաւառական զեմստւօի վարչութեան նախագահ Ա. Ն. Սաղօնովից, «Юридическая Газета». «Новое Обозрѣніе», «Вѣстникъ Права», «Русск. Богатство», «Право», «Міръ Божій» խմբագրութիւններից, իշխան Ա. Ի. Ուրուսովից, Վ. Դ. Սպասովիչից, Ս. Ա. Մուրոմցևից, դոկտոր Բօկօվից,

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР А.

Մ. Ն. Երմոլովայից, Ս. Ի. Վիկտորսկուց, Կալուգայի փաստաբաններից և ուրիշներից:

Հեռագիրներից յետոյ էլի մի քանի ճառեր արտասանեցին: Մոսկուայի հայոց կօլօնիայի կողմից խօսեց պ. Մամիկօնեանց, որը մատնացոյց արեց այն բանի վրա, որ յօբելեարը իր յօդուածներով և «Братская помощь» ժողովածուի հրատարակութեամբ ռուսաց հասարակութեան մէջ համակրութիւն առաջ բերեց դէպի հալածուած Թիւրքահայերը և յայտնեց, որ Մոսկուայի հայերի մէջ բաւական գումար է հաւաքուած 25 հոգու ապաստանարան հիմնելու համար ի յիշատակ ներկայ յօբելեանի: Պրոֆեսոր Կ. Ա. Տեմիրեազեվ ողջունեց յօբելեարին մանկավարժական աշխարհի ներկայացուցիչների կողմից և յայտնեց, որ յօբելեարի հրապարակախօսական գործունէութիւնը և նրա «Изъ эпохи великихъ реформъ» գիրքը ունէին ամենախորին, ամենազօրեղ կրթիչ նշանակութիւն: Ապա ճառեր արտասանեցին՝ պրոֆեսոր Վ. Ի. Գէրիէ, երդուեալ հաւատարմատարների օգնականների կօնսուլտացիայի ներկայացուցիչներ՝ պ. Բիսկ, պ. Լանին (Նիժնի-Նովգորոդից) և Ն. Ա. Կօպուլօվ, որը շեշտեց թէ՝ յօբելեարի գործունէութիւնը ցոյց է տալիս, թէ մինչև անգամ մեր ռուս կեանքի պայմաններում ինչ մեծ նշանակութիւն ունին հաստատ համոզմունքները և նրանց անդրդուելի կերպով կեանքի մէջ մտցնելը: Վերջը յօբելեարին ժողովրդական վարժուհիների կողմից ողջունեց Ս. Վ. Ֆիլատովա: Յօբելեարը մի քանի անգամ պատասխանեց ողջոյններին և իր երախտագի-

տութիւնը յայտնեց այն բոլոր անձանց, որոնք պատմեցին նրա գրականական և հասարակական գործունէութիւնը: Ընթրիքից յետոյ Կ. Ի. Միխայլով—Ստոյեան և Պ. Դ. Օրլով մի քանի արիաներ և ժողովրդական երգեր կատարեցին:

Ապա ուշ գիշերին էլի շնորհաւորական հեռագիրներ են ստացել՝ Նիժեգորոդեան հաշտարար դատաւորների ժողովի նախագահ Ա. Ռօմանովից, Նիժեգորոդի փաստաբանների ներկայացուցիչ Կարպովից և Պետերբուրգից՝ Կ. Կ. Արսէնիեվից, սենատոր Գէրկէից, Վ. Գ. Կօրօլէնկօից, Ն. Կ. Միխայլովսկուց, Ա. Ս. Պօսնիկովից, Լ. Վ. Լիւբէնկովից, Ս. Ի. Պէչկինից և ուրիշներից»:

Այդ փառաւոր տօնը շնորհաւորեց նաև տողերիս գրողը մի քանի թոյլ էջերով, որ դնում եմ ներքև.

Զարչարուած ազգի մի անդամ լինել
Ներկայ ժամանակ, է դժբաղդութիւն.
Այդ ազգի վշտով երկար տանջուել —
Քանհինգ տարիք, է հերոսութիւն:
Ահա այդ վշտին ձայնակից լինել
Կեանքիդ նպատակ դու քեզ ընտրեցիր,
Անոյժ ընկածին զօրաւիդ լինել,
Անիրաւ ոյժը փշրել ուխտեցիր:
Սուրբ իրաւունքի, վեհ արդարութեան,
Այրող խօսքովդ առաքեալ դարձար,
Զրկուածի տանն, ղօհին բռնութեան
Կորովի պաշտպան դու հանդիսացար:

Եղբօրդ ցաւը քո ցաւ չինեցիր,
Այդ ցաւին դարման տանելու համար
Տքնել, աշխատել սրտանց ուխտեցիր:

*
* *

Նորից արեւելք զոհարան դարձաւ,
Նորից մեծ դաշտի պատքը շարժւեցաւ,
Եւ մայր—երկիրը արնով ներկւեցաւ:
Սկսւեց ահեղ, մեծ կոտորածը....
Ինչպէս ամեհի գազան կատաղած,
Նա, ինչպէս անզուսպ, կլանող հեղեղ
Լափեց, սրբեց կեանքը ամէն տեղ:
Եւ անհօգութեան մեծ ապարանքներ,
Եւ փշոտ որրան՝ խղճուկ խրճիթներ,
Ամէն տեղ, անկիւն նա ազատ մտաւ,
Իր վայրագ սրին կերակուր գտաւ:
Եւ այնուհետեւ խղճուկ աշխարհը
Վշտի ծով դարձաւ, արտասուք կտրեց,
Եդեմի նախկին եղ ու մեղրի տեղ,
Արեան հեղեղներ բղխել սկսեց:
Ամէն, ամէն բան կարմիր գոյն բռնեց—
Եւ գետ, պաղ աղբիւր, և ծով, սար և քար,
Կրծքեր ու դէմքեր, վանք ու սրբավայր:
Ամէն ծառ և խոտ, վերջին պատառ հաց,
Անգամ հատիկը չնչին աւազի,
Անմեղ զոհերի արնով շաղախւեց:
Եւ դժոխային փոսեր փորւեցին,

Խղճուկ զոհերին ոչխարի նման
Խառը խմբերով մէջը թափեցին.
Նրանց սիրտ մաշող ողբ ու լացերին,
Անյոյս բառաչին անսալ չուզեցին,
Նրանց բողոքող, անէծքներ ժայթքող
Փրփրած բերաններ հողով լցրին.
Եւ այս զազրալի, սոսկալի պատկեր
Ծանր հողի տակ թաղել փութացին:
Պոկեցին, աւա՜ղ, ունելիքներով
Կենդանի մարդոց միսը ոսկորից,
Հայ մօր ստինքը կրծքից կտրեցին,
Հազար մանուկներ զրկելով կաթից:
Եւ մանուկները անտէր մնացած,
Սրի հարւածից ընկնում էին ցած՝
Մայրերի առաջ երկու կէս եղած:
Իսկ նրանց, որոնց սուրը խնայեց,
Մնացին դուրսը որբ ու անպաշտպան.
Մերկ էին, բոբիկ, դողդողում ցրտից,
Մահ էր սպառնում նրանց դառն սովից,
Եթէ օգնութիւն չհասնէր նորից:
Եւ օրհասի այդ սարսափների տակ
Շւարած մնացինք ամէնքս յուսահատ.
Ապշեցինք իսպառ ահից զարհուրած:
Կեանքը քարացաւ, կեանքը խաւարեց,
Գործ ու մտածմունք ամէն դադարեց:
Սրան կամ նրան դիմել, աղերսել,
Մէկից օգնութիւն մուրալ, սպասել
Կամ մեր եղբօրը, նրա որբերին
Որեւէ կերպով օգնութիւն հասնել,

Այդ ցնորք դարձաւ ու անմոռութիւն,
Զգացմունքներին տիրեց թմրութիւն:

* * *

Ահա այդ ժամին որբերի, լացի,
Դառն տանջանքի, արիւնի միջից
Լսեցաւ քո ձայն սթափեցուցիչ:
Դու ձայն բարձրացրիր եղբօր օգնութեան—
Նրա որբերի լուրջ պաշտպանութեան:
Մանուկներ սիրող Տէր Փրկչի նման
Դու քարոզեցիր աշխարհին ի լուր՝
Տալ խեղճ որբերին «մի բաժակ ցուրտ ջուր»
Ու պատսպարան, հալաւ, կերակուր:
Եւ ձայնիդ ազդման դիւթիչ ուժերից
Նորից արթնացան քարացած սրտեր,
Սառ երակներում արիւնը վազեց
Եւ մեր կրծքի տակ կեանքի նոր վառակ
Առատ յորձանքով հոսել շտապեց:
Ու բիւր աղբիւրներ օգնութեան առատ
Ամէն կողմերից սահեցին առաջ—
Հարուստն իր ոսկին, մշակն իր վաստակ,
Գիտունն իր գրիչ գործին զոհ բերեց:
Եւ քո հոգսերի առարկայ դարձած
Որբերի կեանքը տակաւ առ տակաւ
Մահուան տագնապից փրկուել սկսեց:
Եւ ահա երբ որ տօնում են մարդիկ
Քսանհինգամեայ գործիդ յաղթանակ,
Զգացմունքով լի ամէն հայի սիրտ,

Ամէն բանիմաց անհատ լուսամիտ,
Եւ հողն ու տնից զրկուած պանդուխտներ,
Եւ հազարաւոր անտէր որբիկներ,
Այսօր փրկութեան ուրախ թոթովով
Անխտիր մշակիդ անունն են օրհնում,
Ծանրախոհ գլխիդ դափնիք են հիւսում
Ու անկեղծ սրտից բարիք ցանկանում—
Թո՛ղ դառն ժամերին հասնին լաւ օրեր,
Վշտի օրերին՝ ուրախ տարիներ.
Դարձեալ քսանհինգ ոսկի դարուններ
Աստուած տօնելու քեզ արժան անէր:
Եւ թո՛ղ անընդհատ հնչէի դեռ երկար
Եղբօր օգնութեան քո զօրեղ բարբառ,
Մեզ այրող խօսքով արթուն պահելու,
Վշտից տանջուածի արցունք սրբելու:
Եւ քո անունը, վաստակդ անմահ
Թո՛ղ երկար տարիք կենդանի մնան
Որպէս մի կոթող անբաղդ հայ անուան:

Այս տողերիս պատասխան ստացուեց «Дѣло турецкаго армянина Гульгульяна» գրքոյկը՝ հետեւեալ ինքնաձեռն մակագրութեամբ. «Տ. Գէորգ Մկրտումեանին՝ շնորհակալութեամբ Գր. Ջանշեանից»: Թանկագին յիշատակ:

«Գրական յոբելեանը—իւր տեսակի հարցաքննութիւն է»..... «Բոլոր կրիտիկոսներից ամենամեծը, ամենահանճարեղը, ամենաանմեղանչականը—ժամանակն է». գրում էր Բէլինսկին: «Կարելի է աւելացնել, որ ժամանակը ամենախիստ կրիտիկոսն է: Շատ քիչ

ընտրեալներ են պատուաւոր կերպով դիմանում այդ հարցաքննութեանը իրաւունք ձեռք բերելու ծայրէծայր կարդացած լինելու»... Այդ տեսակէտից՝ Ջանշեանի յոբելեանը մի անգամ ես ապացուցեց, որ նա հրապարակական, փորձնական քննութիւնից յաջողութեամբ դուրս եկաւ և յաղթանակի դափնին ստացաւ: Դրան կենդանի վկաներ են նախ այն, որ նրա հեղինակութիւնները ընթերցողների ստուար բազմութիւն գրաւեցին լայնածաւալ Ռուսաստանի ամեն ծայրերում և լոյս տեսան մի քանի հրատարակութեամբ և երկրորդ՝ նրա յոբելեանին մասնակցեցին ռուս աշխարհի համարեա մտքի բոլոր ներկայացուցիչները—արդի գրական աստղեր, սենատորներ, իրաւունքի և արդարադատութեան ասպարիզում գործողներ ևայլն:

Ջանշեանի յոբելեանը մի այլ բան էլ ապացուցեց—այն, որ նա, իր մեծութեան մէջ իսկ, սաստիկ համեստ էր: Առհասարակ մրցանքների, փորձութեան ենթարկուողը յաջող քննութիւնից յետ իրան մի տեսակ հերոս է կարծում, գետնից միքանի կանգուն բարձր է սաւառնում: Ջանշեան այդ օրը այնքան համեստ էր, որ երբ նրա ընկերներն ու մտերիմներն եկան նրան անձամբ շնորհաւորելու, նրա բնակարանի դուռը փակ գտան: Նա դիտմամբ ցոյցերից խոյս էր տուել: Համեստութեան այդպիսի դրոշմներ պարունակում են նաև նրա շնորհակալական (յոբելեանի առիթով) նամակի մէջ, որ տպագրուեց 1899 թւի «Մշակ»-ի № 190-ում, ուստի ամբողջովին դնում ենք ներքև որպէս ուսանելի նիւթ:

«Վերջին օրերս հոկտեմբերի 4-ին իմ գրականական աշխատութեան 25ամեակի լրանալու առիթով, ես ստացայ Մոսկուայից և Ռուսաստանի զանազան ծայրերից նշանաւոր քանակութեամբ շնորհաւորութիւններ և բարեմաղթութիւններ: Չունենալով դժբաղդաբար հնարաւորութիւն պատասխանել իւրաքանչիւրին առանձին, թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով, երկու խօսք ասել այն անձանց և հիմնարկութիւններին, որոնք պատւել են ինձ իրանց ուշադրութեամբ:

Ես հեռու եմ բառացի կերպով հասկանալու մտքից և «ափորափր-ելը—՝ Ըէ ափայայ» այն չափազանցրած գովասանքները, գրաւոր գնահատութիւնները, որոնք սովորական են և մինչև անգամ համարձակւում եմ ասել, ներելի են նոյնանման դէպքերում: Յոբելեարներին, ինձ թւում է՝ աւելի եւս, քան հանգուցեալներին սազում է aut bene aut nihil կանոնը: Եւ ապա ճշմարիտ որ վատ չէ այդ սովորութիւնը, երբ 25 տարին մի անգամ մարդուն հնարաւորութիւն է տրւում մի քանի վարկեան վայելելու այն իլլիւզիան, թէ նա իր ուժերի չափ կատարել է իր հասարակական պարտքը: Սրտանց շնորհակալութիւն եմ յայտնում ինձ շնորհաւորողներին, որոնք ինձ հնարաւորութիւն տուեցին առ ժամանակ ենթարկուել այդ քաղցր, բայց «մեզ բարձրացնող խաբէութեան» կամ աւելի ճիշտը՝ ինքնախաբէութեան:

Յատկապէս ես պէտք է յիշեմ այն ջերմ շնորհաւորութիւնները, որ ես ստացայ որպէս «Եղբայրական օգնութիւն Թիւրքիայում վնասուած հայերին»

խմբագիր և մասնաւորապէս Թիւրքահայ այն գաղթականներից, որոնք ժամանակաւոր հանգիստ են գտել Ռուսաստանում Թիւրքաց սարսափելի կոտորածից յետոյ։

Ըստ պարտաւորութեան և պատւի և համաձայն suum cuique կանոնի, ես ինձ համար ախորժելի պարտաւորութիւն եմ համարում այդ խորագգաց շնորհաւորութիւնները յատկացնել ըստ պատկանելոյն՝ ռուսաց ինտելիգենցիային և այն բոլոր բարի մարդկանց, որոնք արձագանք տուին բազմաչարչար հայերի անչափ թշուառութիւններին։ Ռուսաց հրապարակախօսների, գիտնականների, գրագէտների աշխատութեամբ և լուսաւոր համակրութեամբ երես երեսի յետևից ստեղծւում էր ոչ առանց նշանաւոր արգելքների, այն ընդարձակ գրականական նիւթը, որ կազմեց «Եղբայրական օգնութեան» 1000 երեսից բաղկացած ահագին հատորը, լոյս սփռելով հայերի դրութեան վրա։ Բարեբաղդաբար, գտնւեցին բաւականաչափ անկողմնապահ և բարի մարդիկ, որոնք չնայելով հայերի վերաբերմամբ տգիտութիւնից և չարութիւնից առատութեամբ տարածւած չարակամ մեղադրանքներին, օգնութեան ձեռք կարկառեցին այն 50 հազար որբերին, որոնց թողել էին նահատակները քրիստոնէական կրօնին հաւատարիմ մնալու համար։

Այդ կամաւոր տուրքերից հաւաքւեց մի գումար, թէպէտ և չնչին թշուառութեան անսահման չափերի հետ համեմատած, բայց ինքն ըստ ինքեան բաւական մեծ (ընդհանուր գումարը հասաւ 66870 ր. 26 կոպէկի, զուտ արդիւնք—53,175 ր. 95 կոպէկի), գոնէ

մասնակի թեթևացնելու անօրինակ չարագործութիւնների զոհերի թշուառութիւնները։ Ահա յատկապէս նրանց, «Եղբայրական օգնութեան» այդ բարի մասնակիցներին, որոնք իրանց աշխատութեամբ և նւիրատւութիւններով նպաստեցին նրա նպատակին (35000 ր. ուղարկւեց Կ. պօլսի ռուսաց դեսպանութեանը եօթը հայ—ռուսական ապաստարաններ հիմնելու համար և 15840 ր. սովածներին կերակրելու համար) պէտքէ ուղղել երախտագիտութեան այն ջերմ արտայայտութիւնները, որոնցով լիքն են Թիւրքահայերից ստացւած շնորհաւորութիւնները։ «Մեր հայեացքները և մեր աւերւած հայրենիքում թողած մեր հարազատ եղբայրների և քոյրերի յոյսերը,—գրում են Կրիմում ապաստան գտած գաղթականները,—դարձրած են դէպի հիւսիս. ձեզանից և ձեր մեծահոգի և մարդասէր ինտելիգենտ աշխատակիցներից, բարեսիրտ Ռուսաստանի ռուս եղբայրներից ենք սպասում անկեղծ եղբայրական օգնութիւն. չէ՞ որ միայն զօրեղ Ռուսաստանի ձեռքի շարժումի շնորհով մեր դժբաղդ հայրենիքում հաստատւեց արտաքին խաղաղութիւնը և հանգստութիւնը... Բայց եթէ մեր անտանելի դրութիւնը էլի շարունակւի, հայ ազգաբնակութիւնը կորստի է մատնւելու»։

Ի վերջոյ պարտաւորութիւնս եմ համարում ջերմ շնորհակալութիւն մատուցանել այն շնորհաւորողներին, որոնք բարեհաճեցին իմ գրականական տարեդարձի առիթով ուղարկել աւել կամ պակաս նշանաւոր նւիրատւութիւններ յօգուտ այն որբերի, որոնք խնամւում են «Եղբայրական օգնութեան» հայ-ռուս-

սական ապաստանարաններում Թիւրքիայում, և նրանով կրկնակի ուրախալի դարձնել իմ համեստ տօնախմբութեան յիշատակը։

Խոնարհաբար խնդրում եմ այն հրատարակութիւններին, որոնք համակրում են «Եղբայրական օգնութեան» նպատակներին, չմերժել արտատպելու իմ այս յայտարարութիւնը»։

Գր. Զանշեան։

Եւ ահա այդպէս՝ երբ Զանշեանին «հնարաւորութիւն էր տրուել մի քանի վարկեան վայելելու այն իլլիւզիան, թէ նա իր ուժերի չափ կատարել է իր հասարակական պարտքը...», երբ նա իր յօբելեանի տպաւորութեան տակ «հնարաւորութիւն էր ստացել առ ժամանակ ենթարկելու քաղցր, բարձրացնող ինքնախաբէութեան», և երբ մենք դեռ նոր զարդարում էինք պսակներով մեր կուռքի՝ Զանշեանի տաղանդաւոր ճակատը, երբ ռուս գրական աշխարհը անկեղծ զգացումներով լցուած՝ ներբողում էր նրա հրապարակախօսական ձիրքը, երբ հայերս հպարտանում, պարծենում էինք նրա անունով, երբ ներշնչուած նրա ազնիւ, մարդասէր գաղափարներով՝ բաց էինք անում նրա առաջ մեր հոգու դռները և գրպանի կապերը, երբ մի բազմաչարչար ազգ նրա մէջ էր մխիթարութիւն գտնում, երբ հազարաւոր անտուն, անտէր որբիկներ իրանց մանկական անմեղ բերաններով նրա կեանքի երկարութեան մասին էին սրտանց աղօթում ու նրա անունը օրհնում, այդպիսի խորհրդաւոր և ներշնչման ժամերին կարճւեց Զանշեանի արդիւնաւոր, անպայման պիտանի կեանքը։

Չկայ նա։ Մահը շտապեց մի ծանր հարուած ևս տալ մեզ, կարծես ուխտած լինելով մի անգամից խլել մեր վերջին յոյսը, վերջին յենարանն ու ապաւէնը։ Այդպիսի մի կորուստ դժուարատար է, անփոխարինելի։ Եւ մենք տարակուսած ու մտորմունքների մէջ ընկղմուած, հարց ենք տալիս—ի՞նչ եղաւ, ինչո՞ւ դադարեց այդ մեծ կեանքը, ինչո՞ւ փշրուեց նրա գրիչը։ Ինչո՞ւ չկայ նա։ Նա՛, որ դեռ երէկ դղրդացնում էր, նա, որ ապրում և ապրեցնում էր, նա, որ մտածում, գործում էր և այլոց մտածելու ու գործելու նիւթեր էր մատակարարում, նա, որ պատանեկական ոգեւորութեամբ քարոզում ու պաշտպանում էր ազնւութեան, իրաւունքի և արդարութեան գաղափարները։ Ահա ինչո՞ւ։ Նա բնութիւնից վատառողջ կազմուածք ժառանգելով, իր ուժերից վեր գործ ու աշխատութիւն դրեց պաշտպանելու իր ամբողջ կեանքի ընթացքում 60-ական թւերի լուսաւոր գաղափարները և գրկւածներին։ Նա ապրեց ուրիշի համար։ Նա ցաւեց ուրիշի ցաւով։ Նա լացեց ուրիշի հետ։ Ուրիշի տանջանքը իր տանջանք շինեց և այդ տանջանքները մեղմացնելու համար գիշեր, ցերեկ անքուն աչքերով աքնեց, աշխատեց և այդ արտակարգ, անձնւէր աշխատութեան ու գործի միջոցին՝ իր ամբողջ կենսական հիւթը գործադրեց։ Նա գրիչը իր սեպհական արիւնի մէջ թաթախեց և ինչպէս մի ճրագ վառւեց։ Հալւեց մինչև վերջ։ Ու մարեց։

Այդ արժանաւոր հայի և տաղանդաւոր հրապարակախօսի անժամանակեայ մահը թէ որքա՜ն արտասուք խլեց և ափսոսանք յարուցեց, դրան վկայ են

այն հանդիսաւոր թաղումը և ցաւակցական յօղւածներն ու թղթակցութիւններն, որոնք սփռւած են ռուս մամուլի մէջ և որոնց (փոքրիկ բացառութեամբ) թարգմանութիւնները դնում ենք ներքև: Այդ տողերը աւելի պարզ, պայծառ կերպով ընթերցողի առաջ կպատկերացնեն Ջանշեանի խոշոր դէմքը և կորստի մեծութիւնը:

Սակայն նա մեռած չէ:—Ապրում են նրա մտքերը: կենդանի է նրա գործը:—

«Не говорите мнѣ онъ умеръ—онъ живетъ,
Пусть жертвенникъ разбитъ—огонь еще пылаетъ,
Пусть роза сорвана—она еще цвѣтетъ,
Пусть арфа сломана—аккордъ еще рыдаетъ....»

Նրա վառած լուսաւոր ջահը լուսաւորում է մեր ուղիները, «Գնանք և մենք նոյն շաւղով..»:

Գէորգ քահ. Մկրտումեանց:

Գ. Ա. ՋԱՆՇԻԵՒԻ ԹԱՂՈՒՄԸ:

Երէկ յուլիսի 21-ին հողին յանձնւեց Գրիգոր Աւետովիչ Ջանշիևի դիակը: Առաւօտեան $9\frac{1}{2}$ ժամին հանգուցեալի բնակարան՝ Զուբովսկի ծառուղի, տուն Վլադիմիրովի, հաւաքւեցան բազմաթիւ անձինք—Մոսկւայի շրջանի դատաստանական պալատի երդւեալ հաւատարմատարները, դատաստանական մագիստրատուրայի մի քանի անդամները, Մոսկւայի, Պետերբուրգի և այլ տեղերի հայոց ներկայացուցիչները, «Русск. Вѣд.» խմբագրութեան անդամները—Վ. Մ. Սոբոլևսկի և Դ. Ն. Անուչին և աշխատակիցները, նոյն լրագրի գրասենեակում և տպարանում ծառայողները, հանգուցեալին յարգողները և բարեկամները: Այստեղ հայոց Յարութիւն քահանայ Պապովեանը հոգեհանգիստ կատարեց, որից յետ արծաթապատ զիպակով պատած դագաղի մէջ հանգուցեալի աճիւնը դուրս բերին բնակարանից և դրին դիակառքի վրա: Տխուր հանդէսը ուղևորւեց դէպի Մեասնիցկայեա՝ հայոց Վերացման Խաչի եկեղեցին, ուրտեղ հասաւ օրւայ 12 ժամին: Եկեղեցին զարդարած էր դափնեայ ծառերով. իսկ գլխատակում, դագաղի մօտ տեղաւորած էր մի մեծ արմաւենի: Եկեղեցու մէջտեղում դրւած դագաղը թաղւած էր բազմաթիւ պսակների մէջ: Նրանց թւում գտնւում էին հետևեալները—

Արծաթի պսակներ՝ Աստրախանի երախտագէտ հայ հասարակութիւնից, հետեւեալ վերտառութեամբ. «Հայ որբերի հօրը և անխոնջ խնամակալին»: Մոսկուայի հայերի կողմից—«Որբերի հօրը»: Դափնեայ, մետաղի և թարմ ծաղիկների պսակներ դրել էին՝ հանգուցեալի եղբայրը, եղբօր կինը, Նախիջեւան—Դօնի հայ հասարակութիւնը—«Մարդասէր և քանքարաւոր հրապարակախօսին և զրկուած որբերի անշահասէր պաշտպանին», Մոսկուայի հայ ուսանողութիւնը—«Братск. Помощь»-ի խմբագրին և տանջուածների բարեկամին», Տփխիսի հայոց բարեգործական ընկերութեան վարչութիւնը—«Զրկուածների և որբերի բարեկամին», Պետերբուրգի հայերը — «Եղբայրական օգնութեան կազմակերպողին», Մոսկուայի հաշտարար դատաւորները, Մոսկուայի Նահանգական դատարանը, Նախիջեւան—Դօնի քաղաքային վարչութիւնը, Տփխիսի մի խումբ երիտասարդներ — «Հարստահարուածների բարեկամին» «Право»-ի խմբագրութիւնը—«60-ական թուականների լուսաւոր գաղափարների համար անմոռաց մարտնչողին». «Русск. Вѣд.»-ի կողմից չորս պսակ—հրատարակիչները և խմբագիրները, աշխատակիցները — «Մեծ բարենորոգումների շրջանի հեղինակին և գործունեայ աշխատակցին», գրասենեակը, տպարանը, «Курьеръ»-ի խմբագրութիւնը, «Հանրագիտական բառարան» ի հրատարակիչներն և խմբագիրները—«Ճշմարտութեան պաշտպանին», «Тифл. Листокъ»-ի խմբագրութիւնը—«Տօկուն, ազնիւ հրապարակախօսին», «Մշակ»-ի խմբագրութիւնը —

«Ազնիւ հրապարակախօսին և զրկուածների պաշտպանին», «Кавказск. Вѣстникъ»-ը—«Լաւ մարդուն», Մոսկուայի շրջանի դատաստանական պալատի երդուեալ դատաւորները և նրանց օգնականները, երդուեալ հաւատարմատարների համախորհրդի օգնականները — «Ճշմարտութեան և մարդասիրութեան համար անխոնջ մարտնչողին», Կ. Տ. Սոլդատէնկօվը, Տէրեանցների ընտանիքը, Վ. Մ. Պետրօվան, Ալէքսանդրօվները, մի քանի պսակներ վերտառութեամբ—«Թանկագին ընկերոջը, անմոռաց բարեկամին» — «Ամենակրտսեր բարեկամից» և ուրիշները: Մի պսակ պատրաստած էր տերեւներից և ծաղիկներից իսկ նրա մէջտեղ տեղաւորած էր «Братск. Помощь» գիրքը պատած սեւաթոյր շղարշով, իսկ ժապաւէնների վրա մակագրած էր —«Ժողովրդական վշտի համար գթասիրտ վշտացողն»:

Պատարագը և եկեղեցում թաղման կարգը կատարեց տեղական Յարութիւն քահանայ Պապովեանը: Նախ քան կարգ կատարելը, հայերէն ճառ ասացին Պապովեան քահանան, Մոսկուայի ապարանատէր Պ. Բարխուդարեան (Մոսկուայի համալսարանի ուսումնաւարտ) և Լազարեան ճեմարանի ընթացաւարտ Պ. Թաղէոսեան: Ճառախօսները իրանց ճառերի մէջ հանգուցեալին նկարագրում էին, որպէս որբերի աչքի ընկնող խնամակալ, որպէս 60-ական թուականների իդէալիստ, որպէս ճշմարտութեան, արդարադատութեան, երդուեալ դատարանի պաշտպան: Եկեղեցին լիքն էր ազօթողների և հանգուցեալին վերջին պարտքը հատուցանել ցանկացողների բազմութեամբ:

Բացի վերյիշեալներից, որոնք գտնւում էին դագաղը տնից դուրս հանելիս, եկեղեցում ներկայ էին Տփխիսի և Մոսկւայի զանազան լրագիրների ներկայացուցիչներ, նրանց թւում և «Курьеръ»-ի խմբագիր՝ Եա. Ա. Ֆէյգին, ուսանող սերունդը—համալսարանի ուսանողները, ինժեներական, տեխնիկական ուսումնարանների և Լազարեան ճեմարանի աշակերտները, հաշտարար դատաւորների ժողովի նախագահ Ս. Ի. Պէշկին, Մոսկւայի երդւեալ հաւատարմատարների խորհրդի նախագահ Ա. Ա. Կրիւկով խորհրդի անդամների հետ միասին, իրաւագիտական ընկերութեան եղեալ նախագահ Ս. Ա. Մուրոմցեվ, ներկայ էին շատ երդւեալ հաւատարմատարներ, նրանց թւում էին հանգուցեալի բարեկամներ՝ Պ. Ա. Ստոլպովսկի, Դ. Ն. Դօբրօխոտօվ, համալսարանական ընկեր Ֆ. Ա. Կօրշ, բազմաթիւ յարգողներ, ծանօթներ և Մոսկւայում ապրող հայերից շատերը։ Եկեղեցու կարգը աւարտւեց կէսօրւայ 2 ժամին և դագաղը եկեղեցուց դուրս տարան ձեռների վրա հանգուցեալի ընկերակիցները և յարգողները։ Լազարեան ճեմարանի առաջ պաշտօն կատարւեց։ Այստեղից հանդէսը շարժւեց դէպի Մեասնիցկայեա, Ֆուրկասովի նրբափողոց, Կուզնէցկի մօստ, Պետրովկա և Ստալէշնիկով նրբափողոցով դուրս եկաւ Չերնիշևսկի նրբափողոցը, ուր «Русск. Вѣд.»-ի խմբագրատան առաջ նորից պաշտօն կատարւեց։ Խմբագրատան մուտքի առաջ դագաղին դիմաւորեցին յիշեալ լրագրի խմբագիր Վ. Մ. Սօբօլևսկին, խմբագրութեան անդամները, աշխատակիցները, գրասենեակում և տպարանում

ծառայողները։ Պաշտօնից յետ դագաղը դրւեց դիակառքի վրա՝ ամպհովանու տակ և թաղման թափորը ուղևորւեց Նիկիտսկի, Բոլշոյ Պրեսնեա փողոցներով դէպի հայոց Վագանկովի գերեզմանատունը։ Դագաղի ետևից մինչև գերեզմանատուն գնում էին հանգուցեալի բազմաթիւ մերձաւորները և յարգողները։ Առանձին կառքով տանում էին բազմաթիւ պսակները։ Հանդէսը գերեզմանատուն հասաւ մօտ 3 ժամին։ Դագաղը տարան դէպի գերեզման, որ գտնւում էր Ս. Յարութիւն անունով կառուցւած եկեղեցու մօտ և այստեղ բաց արին։ Կարճատև արարողութիւնից յետ սկսւեցին ճառախօսութիւնները։ Առաջինը խօսեց պրօֆէսոր Դ. Ն. Անուչին, որպէս «Русск. Вѣд.»-ի խմբագիր։ Նա մօտաւորապէս ասաց հետևեալը.

«Թանկագի՛ն ընկեր, բարեկամ և աշխատակից. 20 տարուց աւելի դու մեզ հետ բաժանեցիր այն աշխատանքը, որ գործ էինք դնում «Русск. Вѣд.»-ի գործը առաջ տանելիս։ Արձագանք տալով այն բոլորին, ինչոր մարդկային է, դու առանձնապէս հետևում էիր իրաւագիտական և դատաստանական հարցերին և կեանքիդ գլխաւոր նպատակներից մէկը դրեցիր ռուս հասարակութեանը հասկացնելու 60-ական թւականների մեծ բարենորոգումների նշանակութիւնը և տպագրական խօսքի միջոցով պաշտպանելու նրանց հիմքերը և պրինցիպները։ Կրթութեամբ, զարգացումով, գրական գործունէութիւնով դու ռուս լինելով, միևնոյն ժամանակ ազգիդ հարազատ, անձնւէր զաւակն էիր և մեծ ծառայութիւն

արեցիր քո ժողովրդին, նրա թշուառութեան տա-
րիներին ջանքերիդ և եռանդիդ շնորհիւ ժողովարա-
րելով նշանաւոր միջոցներ հայ որբերի խնամատարու-
թեան գործի համար։ Ունենալով լայն կրթութիւն և
կենդանի ձայնակցութիւն, դու գիտէիր հաւասարապէս
գնահատել և բնութեան գեղեցկութիւնը, մանա-
ւանդ քո հարազատ Կովկասը և արեւմտեան Եւրո-
պայի քաղաքակրութեան լաւագոյն կողմերը։ Դու
ջերմ սիրում էիր քեզ համար թանգ ռուս գրողներին,
քո մէջ արձագանք էին գտնում գեղարուեստի, գրա-
կանութեան և հասարակական կեանքի բոլոր ընթա-
ցիկ երեւոյթները։ Բայց դու առանձնապէս նուիրած
էիր քեզ համար թանգ լրագրի (Русск. Вѣд.) գոր-
ծին։ Մահուանիցդ դեռ մի ժամ առաջ դու նրա մասին
էիր խօսում նրա խմբագրի հետ և կարելի է ասել,
մեռար մտածելով քեզ համար թանգ օրգանի մասին։
Կրակոտ, համոզուած հրապարակախօ՛ս, դու ապրեցիր
և մեռար որպէս փիլիսոփա և բարի, սիրալիր ժպիտը
դեռ պահպանուել է ազնիւ դէմքիդ վրա։ Ընդունի՛ր
մեր խորին շնորհակալութիւնը բոլոր քո արածներիդ
փոխարէն մեզ, մեր օրգանի, բոլոր ռուս հասարակու-
թեան, մարդկութեան համար։ Sit tibi terra levis.
յաւիտենական յիշատակ քեզ թանկագի՛ն ընկեր և
բարեկա՛մ»։

Հետեւեալ խօսքը ասաց Ս. Ա. Մուրոմցեվը—

«Մնա՛ս բարև Գրիգորի՛ Աւետովիչ, մնաս բարև.
հին ընկեր և աշխատակից։ Վաղաժամ թողիր դու
մեզ։ Այժմ կանգնած անգութ մահուան առաջ քո
բարեկամներն ու յարգողները հիմք ունեն կեանքից

շնորհակալ լինելու, որ նա քեզ պարգեւել էր այնպիսի
շնորհներ, որոնցով շատ քչերն են օժտուած։ Դու
բաղդ ունեցար պատանեկութեանդ տարիներում
ամբողջ սրտովդ դաւանել օրինականութեան, արդա-
րութեան և ճշմարտութեան իդէալները և այդ դա-
ւանանքը տարածելուն նուիրեցիր քո ամբողջ էու-
թեամբդ։ Եւ այդ բաղդը միևնոյն ժամանակ եղաւ
կեանքիդ սխրագործութիւնը—դժւար սխրագործու-
թիւն, որով և կրկնապատիկ շնորհակալութիւն վաս-
տակիցիր քեզ համար։ Շատերը և շատ բանի համար
քեզ պիտի «շնորհակալութիւն» ասեն։ Ամենից առաջ
շնորհակալութիւն քեզ Մոսկւայի եղեալ իրաւաբա-
նական ընկերութեան անդամների կողմից քո բազ-
մամեայ գործունէութեան համար, որպէս նրա
քարտուղար, որպէս նրա հրատարակութիւնների
աշխատակից և որպէս նրա գլադմունքներին մաս-
նակից։ Շնորհակալութիւն քեզ մամադէտ ընկեր—
փաստաբանների կողմից, որոնց ձգտում էիր ցոյց
տալ, թէ փաստաբանը արդարադատութեան մէջ
լիակատար մասնակցութիւն ունի, իսկ փաստաբա-
նութիւնը հասարակական ծառայութիւններից մէկն է։
Շնորհակալութիւն պիտի ասէ քեզ ռուս հասարա-
կութեան մտաւոր սերունդը այն եռանդի համար,
որով դու աշխատում էիր այդ սերնդի մէջ ամրացնել
այն իդէալները, որոնք ոգեւորել են մեր նախորդներին
և ուսուցիչներին և որոնք ղեկավարել են մեր հա-
սակակիցներին։ Շնորհակալութիւն կասէ քեզ վեր-
ջապէս և ամբողջ ռուս հասարակութիւնը, որ դու
նրան մօտեցրիր արիւնակից եղբայրներիդ հետ, սո-

վարեցրիր մեզ սիրել և գնահատել դրանց: Գրիգոր Աւետովիչ Զանշիևի յիշատակը թող ապրի յաւիտեան և նրա աճիւնը թող անդորրութեան մէջ հանգչի»:

Յետոյ խօսեց խոր յուզուած և արտասուքից ընդհատուող ձայնով հանգուցեալի ամենամօտ բարեկամ և պաշտօնակից ընկերը՝ երդուեալ հաւատարմատար Պ. Ա. Ստալպօվսկին, որ հէնց թաղման օրն էր վերադարձել հեռաւոր ճանապարհորդութիւնից...: Երդուեալ հաւատարմատար Գ. Մ. Կարբյլին, Գր. Աւետովիչին բնորոշելով որպէս «հոգւով բանաստեղծ և հրապարակախօս, այդ բառի ամենաբարձր իմաստով» վերջացրեց այսպէս.—

«Դատաստանական օրէնսգրքերը յանձին ձեր ունեցան կրակոտ ախոյեան, յամառ, տոկուն և արթուն պահապան: Բայց որքան ուժգին պիտի թրթռար ձեր սիրտը, երբ ձեր ականջին հասան բազմաչարչար տաճկահայ եղբայրներիդ հառաչանքները: Դուք անդրանիկն էիք, որ «Русск. Вѣд.»-ի էջերում նկարագրեցիք սիրտ պատառող տեսարաններ և ձայն բարձրացրիք օգնելու նրանց, որոնք համարեա մոռացուած էին. իսկ երբ զգացիք, որ այլ տեսակ օգնութիւն է հարկաւոր—նիւթական օգնութիւն, առանց ձեռներդ ծալելու գործեցիք գիշեր և ցերեկ: Այստեղ մանրամասնութիւնների տեղը չէ, բայց և ձեր գործունէութեան արդիւնքն եղաւ «Братск. Помощь» ժողովածուն, որի ճակատը զարդարեցիք ձեզ արժան բնաբանով—

«И въ жизни цѣль есть, цѣль святая:
Помочь слабѣйшему въ пути».

Այդ եղբայրական օգնութիւնով դուք ձեզ համար անձեռագործ արձան կանգնեցրիք, քանի որ գոյութիւն կունենայ հայ հասարակութիւնը, որը ձեր անունը միշտ յարգանքով և շնորհակալութեամբ կյիշէ և այն հազարաւոր որբերը, որոնց օգնութեան ձեռք կարկառեցիք և օթևան տւիք, դէպի երկինք կուղղեն իրանց աղօթքները ձեր հոգւոյ հանգստեան համար: Մոսկւայի և Պետերբուրգի հայ հասարակութիւնները յանձին ձեր կորցնում են իրանց ականաւոր ներկայացուցիչներից մէկին, կորցնում են նրան, որի անունով նրանք հպարտանում էին: Եւ այդ հասարակութիւնները ձեզ յաւիտենական յիշատակ կմաղթեն»:

Պ. Թումեանցը խօսեց հայերէն, անելով հանգուցեալի կենսագրութիւնը: Մոսկւայի ինժեներական ուսումնարանի ուսանող Պետրօվը բնորոշեց հանգուցեալին, որպէս ուսանող երիտասարդութեան համար համակրելի գործողի—«Նա միշտ շտապում էր դէպի կարիք ունեցողը և մինչև անգամ մահւան րոպէներին իր մասին չէր մտածում: Նա իր ամբողջ կեանքը ուրիշներին նւիրեց»: Մոսկւայի երդուեալ հաւատարմատարների օգնականների համախորհրդի կողմից խոր զգացուած խօսք ասաց Դ. Ն. Դօբրօխօտօվ, փայլուն գոյներով ներկայացնելով հանգուցեալի համակրելի յատկութիւնները որպէս մարդ և որպէս իրաւաբանական կազմակերպութեան անդամ: Յետոյ խօսեց Մոսկւայի համալսարանի իրաւաբան-ուսանողներից մէկը.—

«Գրիգո́ր Աւետովիչ, իմ ընկեր ուսանողներից քչերն են գերեզմանիդ մօտ ժողովուած—ի միջի այ-

լոյ ասաց երիտասարդ ճառախօսը — բայց այն պատճառով միայն, որ նրանց մեծամասնութիւնը հեռացել է Մոսկուայից։ Եթէ այստեղ լինէին, ի հարկէ, դու նրանցից լաւ խօսքեր կլսէիր։ Գրքիդ վրա դու գրեցիր՝ «Որքան խաւար է գիշերը, այնքան պայծառ են աստղերը...» Այո, պայծառ աստղն է լուսաւորում մեր ճանապարհը... մենք կաշխատենք արժանաւոր կերպով կրել քո մաքուր և ազնիւ դրօշակը»։

«Курьеръ»-ի խմբագիր Եա. Ա. Փէյգինի արտասանած ճառից յետ երդւեալ հաւատարմատարի օգնական Ա. Պ. Դոբրոխոտով կարդաց Գ. Ա. Ջանշիևի յիշատակին նւիրւած մի ոտանաւոր։ Այնուհետև ճառախօսութիւնները վերջացան։ Կատարւեց թաղման կարգը։ Դագաղը փակւեց և իջեցրին գերեզման։ Գերեզմանի հողաթումբը թաղւեց բազմաթիւ պսակների մէջ։

(Русск. Вѣдомости № 202, 1900 թ.)

Թաղման նկարագիրը տպագրւած էր նաև «Курьеръ»ում, որ շատ նման էր վերի նկարագրութեան, ուստի այստեղ թարգմանաբար առաջ ենք բերում միայն հանգուցեալի մտերիմ ընկեր և բարեկամի՝ երդւեալ հաւատարմատար Մ. Պ. Ստալպօվսկու և նրա ճառի մասին. այդ կտորը բաց է թողնւած «Русск. Вѣд.»-ի էջերից։

«Նրա ճառը մի հեծկլտանք էր, մի խոր վիշտ ունեցող մարդու հառաչանք, որ կորցրել էր այն բոլորը, ինչ որ նրա համար թանգ, բերկրալից էր։ Ինչպէս ամեն անկեղծ վիշտ, նա շարժեց բոլորի սրտերը և գերեզմանի մօտ Մ. Պ. Ստալպօվսկու խօսքի ժամանակ մեծամասնութիւնը լալիս էր։ Նա յիշատակում էր իր 26ամեայ սերտ բարեկամութիւնը հանգուցեալի հետ և չէր կարողանում հաշտւել այն բոլորի հետ, ինչ որ կատարւել էր։ Դեռ շատ չէր անցել այն օրից, երբ Մ. Պ. Ստալպօվսկին ուղեկցում էր Գրիգոր Աւետովիչին տօնական հանդէս գնալիս, որ կազմւած էր ի պատիւ նրա 25ամեայ գործունէութեան... Գրիգոր Աւետովիչը ճանապարհին ասել էր նրան. «Յոբելեանը մահացուցակի սկիզբն է», և խնդրել էր ընկերոջը ոչինչ չխօսել յոբելեանի ժամանակ։ «Դու ինձ այն ժամանակ արգելեցիր — բացականչեց ճառախօսը — բայց այժմ չես կարող, ես այժմ ազատ եմ։ Բայց, Աստուա՜ծ իմ, ո՜րքան մեծ տարբերութիւն երկու մոմենտների մէջ։ Այն ժամանակւայ ուրախ թրթիռը, որով ես պատրաստւում էի գնահատել քո գործունէութիւնը և այժմ հրաժեշտի խօսքերը՝ որ այստեղ արտասանում եմ։ Ինչպիսի՜ լուսաւոր խելք, ինչպիսի՜ քնքուշ, գգւող, սիրառատ սիրտ պայթեց և դադարեց զարկել»։ Ճառախօսը արտասուքներից ընդհատելով խօսքը, նորից շարունակեց պատմել հանգուցեալի հոգու նուրբ կազմակերպութեան մասին և հրաւիրում էր Ջանշիևի օրինակին հետևել. «Գնալ քո շաւղով — ահա ռուս հասարակութեան նպատակը. հետևել քեզ, նշանակում է՝ գնալ բարութեան շաւղով»։

(Курьеръ № 201, 1900 թ.)

ԵՐԿՈՒ ԿՈՐՈՒՍՏ

Երկու օր շարունակ, այսինքն՝ 16 և 17-ին յուլիսի Մոսկուան երկու ծանր կորուստներ ունեցաւ և այդ կորստների վիշտը Մոսկուայի հետ անկասկած կբաժանէ նաև բոլոր Ռուսաստանը։

Այլ աշխարհ հեռացան երկու այնպիսի ականաւոր անձեր, որոնք իրանց կեանքի ընթացքում մեծ դեր խաղացին ռուս ժողովրդի մտաւոր և հասարակական գործունէութեան ասպարիզում։

Տասնվեցի առաւօտեան 6 ժամ 30 րոպէին վախճանւեց մեր երդւեալ փաստաբանութեան ամենաականաւոր ներկայացուցիչներից մէկը՝ իշխան Ալէքսանդր Իվանովիչ Ուրուսով։

Յուլիսի 17-ին, օրւայ 4 ժամին վախճանւեց տաղանդաւոր հրապարակախօս երդւեալ հաւատարմատար Գրիգոր Աւետովիչ Ջանշիև։*)

Միւս կորուստը (խօսքը Ջանշիևի մասին է) աւելի զգալի և աւելի վշտալի է։ Ի դէմս դեռ նոր վախճանւած Գրիգոր Աւետովիչ Ջանշիևի, ոչ միայն զրկւեցինք զարմանալի մաքուր հոգու տէր անձից, ոչ միայն անարգւած ճշմարտութեան և մարդկութեան ամենալաւ իդէալների համար անդրդւելի կռւողից, այլ և զրկւեցինք մեր ամենաքանքարաւոր

*) Նրանից յետ գալիս են դատողութիւններ իշխան Ուրուսովի մասին, որը թարգմանել մեր նպատակից դուրս համարեցինք։

Ծան. Թարգ.

հրապարակախօսներից, գրողներից մէկից, որ տաղանդի տեսակէտից առաջին նշանակութիւն և մեծ ազդեցութիւն ունէր ընթերցողների վրա։

Ջանշիև ռուս չէր. նա ծագումով հայ էր։ Ծնւել էր Տփխիսում 1851 թւին և այնտեղ էլ ստացել էր իր միջնակարգ ուսումը։ Իսկ բարձրագոյն ուսում, ինչպէս և իշխան Ուրուսովը, նա ստացաւ Մոսկւայի համալսարանի իրաւաբանական բաժնում, ուր և աւարտեց իր ուսման ընթացքը 1874 թւին։ Գրիգոր Ջանշիև պարապում էր փաստաբանութեամբ (գլխաւորապէս քաղաքացիական գործերով), բայց այդ ասպարիզում նա հռչակաւոր անուն չվաստակեց, որովհետև քրէական մեծ գործերում, ուր կարելի էր իր ճարտասանութեան ույժը ցոյց տալ, նա չէր մասնակցում։ Իսկ Ուրուսովի համար փաստաբանութիւնը առաջին տեղն էր բռնում, միայն ազատ ժամերը նա նւիրում էր գրականութեան... Ջանշիև, ընդհակառակն. նրա կենդանութիւնը, նրա բարոյական նպատակը — գրականութիւնն էր։ Գրիգոր Աւետովիչը թէ իրաւաբանական և թէ հասարակական այլ հարցերի առիթով շատ շատ է գրել։

Բայց անպայման մեծ հռչակ վաստակեց նա իր «Մեծ բարենորոգումների ժամանակաշրջանից» գրքով։ Հաստատապէս կարելի է ասել, որ Ռուսաստանում չկայ փոքր ի շատէ զարգացած մի անձնաւորութիւն, որ տեղեկութիւն չունենար ռուս լեզուով հրատարակւած այդ ամենալաւ գրքերից մէկի մասին։ Վաթսունական թւականների մեծ բարենորոգումների ժամանակաշրջանը ոչ ոք այնպէս չէ ու-

ուսումնասիրել, ինչպէս Ջանշիեւը, օգտուելով բազմաթիւ նոր, դեռ մինչեւ այդ ժամանակները ձեռք չգիպած աղբիւրներից (դօկումենտ): Աւելի ամբողջացնելու համար կարելի է ասել, որ Գրիգոր Աւետովիչի առաջին, մինչեւ անգամ միակ սէրը բարենորոգումների ժամանակաշրջանն էր կազմում: «Մեծ բարենորոգումների ժամանակաշրջանից» գիրքը եօթ հրատարակութիւն ունեցաւ, իւրաքանչիւր անգամ հարստանալով՝ նոր լրացուցիչ մենագրութիւններով (մոնոգրաֆիա): Ի նկատի ունենալով, որ Ռուսաստանում գրքեր սակաւ են տարածւում, վերջիշեալ հանգամանքը մի աչքի ընկնող յաջողութիւն պիտի համարել: Գրքի գլխաւոր արժանաւորութիւնը նրանումն է կայանում, որ գրուած է անսովոր թեթեւ ոճով, չափից դուրս ժողովրդականացրած է եւ միենոյն ժամանակ բանաստեղծական գրաւչութիւն ունի... Ջանշիեւի լուրջ, գիտնական յօդուածները գրըուած են գեղարուեստական երկերի լեզուով եւ համեմուած են զանազան բանաստեղծութիւններից մէջ բերած կտորներով: Այդ գիրքը փաստերի չոր ու ցամաք պարզաբանութիւն չէ, սառնասրտութեամբ արուած եզրակացութիւններ չեն, այլ ինքը՝ կեանքն է: Գրքի հեղինակը այստեղ թափել է իր սիրտն ու հոգին: Ո՜հ ո՜րքան լաւ սիրտ, ո՜րքան գովելի հոգի...

Բացի վերեւ յիշուած գրքից, Ջանշիեւը հրատարակել է մի շարք առանձին առանձին գրուածքներ, որոնք են — «Веденіе неправыхъ дѣлъ», «Основы судебной реформы», «С. И. Зарудный

и судебная реформа», «Страница изъ исторіи судебной реформы. Д. Н. Замятинъ». «Перлъ Кавказа» — ճանապարհորդական նկարագրութիւններ Բորժոմի մասին:

Գ. Ա. Ջանշիեւը գլխաւորապէս աշխատակցում էր «Русск. Вѣд,» լրագրին, որի եւ հրատարակիչներից մէկն էր: Բացի դրանից, գրում էր «Русск. Мысль» եւ «Вѣстникъ Европы» ամսագրերում, «Право» իրաւաբանական ամսագրում: Վերջերս գրում էր նաեւ «Сѣверный Курьеръ»-ում:

Հանգուցեալ Ջանշիեւը ծագումով հայ լինելով, ի հարկէ չէր կարող անտարբեր վերաբերուել իր համազգիների տանջանքներին Տաճկաստանում: Զրկուած հայերի օգտին նա հրատարակեց «Братская Помощь» ժողովածուն... Այդ ժողովածուն երկու հրատարակութիւն ունեցաւ եւ տուեց մինչեւ վաթսունհինգ հազար րուբլի արդիւնք...

Ջանշիեւի հայկական ծագումից լինելը, հասկանալի է, հանգստութիւն չէր տալիս մեր տնաբոյծ պաշտպանների եւ հայրենիք օրգանների խմբին պատկանող զանազան լրտեսներին ու մատնիչներին: «Ուր հարկն է, նրանք մատնացոյց էին անում, բարբանջում էին սեպարատիզմի եւ այլ անմտութիւնների մասին, շշնջում էին՝ թէ Ջանշիեւը որպէս հայ, միայն հայերի օգտին էլ գործում է»: Որպիսի վրդովեցնող ստորութիւն... Այդ պարոնները խարդախողներին յատուկ ձեւերով էին հանում խաղաթղթերը եւ գիտմամբ լռում էին իրանց քաջ յայտնի այն փաստերի

մասին, որոնք ապացուցանում էին, որ Ջանշիևը միայն Հայերի մասին չէր աշխատում... «Մեծ բարենորոգումների ժամանակաշրջանից» գրքի համարեա բոլոր արդիւնքը նրա հեղինակը զանազան ժամանակներում նւիրեց ———— չքաւոր ուսանող երիտասարդութեանը և անբերրի տարիները նւիրեց նոյն ———— սոված մուժիկներին: Պարոն պաշտպանները չէին կարողանում ներել Ջանշիևին, այդ՝ հոգւով իսկական ռուս մարդուն, որ նա այդպէս ոգևորւած ներբողել է ազատարար վերանորոգումները, որպիսի վերանորոգումները սաստիկ ատելի էին մեր՝ խաւարի և մտրակի երկրպագուներին...

Շատ բան կարելի է ասել Ջանշիևի մասին և այն էլ միայն լաւը. «Նա մարդ էր»... Նրա թաղման շաբաթը լալիս էին և այդ արցունքները ցուցամոլ չէին, դրանք անկեղծ, ակամայ արցունքներ էին:

Գրիգոր Աւետովիչը առհասարակ վատառողջ էր, բայց ոչ ոք այդքան արագ վերջաբանի չէր սպասում... Նա անկողին մտաւ մահւանից մի քանի օր առաջ միայն և օրհասի րոպէից դեռ մի քանի ժամ առաջ, լիովին հասկանում էր ամէնը և խօսակցում էր «Русск. Вѣд.»-ի խմբագրի հետ, որ այց էր եկել նրան:

Հանգիստ նրա ազնիւ աճիւնին, յաւիտենական յիշատակ նրա ամենամաքուր և ամենաազնիւ անւանին: Անկարելի է չողջունել այն մտքին, որ ցանկանում են Ջանշիևի յիշատակը յարգելու համար նրա

անունով գրադարան-ընթերցարան բանալ... Այդ նպատակով արդէն ժողովարարութիւնը սկսւած է և ի հարկէ յաջող կերթայ... եթէ միայն մի որևէ արգելքի չհանդիպի... Մեզնում այդպիսի դէպքեր ստէպ և բոլորովին անսպասելի կերպով պատահում են:

Չէր խանգարի, եթէ աշխատէին Ջանշիևի բոլոր գրւածները ամենաշուտ միջոցում հրատարակել»:

Լ. Մ-վ:

(Сѣверный Курьеръ, № 248, *Թիւ 1900*)

Գ. Ա. ՋԱՆՇԻԵՒ

(1851 — 1900)

Եկատերինեան դարի երգիչ Դերժավինը դառնալով Եկատերինէ Թագուհուն ասել է — Դու փառքովդ, ես ստուերովդ կապրեմ։ — Նոյն խօսքերը կարող էր կրկնել մի ուրիշ երգիչ. բայց ոչ թէ մի հերոս անձնաւորութեան դիմաց, այլ մի հերոսական շրջանի — մեծ բարենորոգումների ժամանակաշրջանի դիմաց. և այդ երգիչը Գրիգոր Աւետովիչ Ջանշիեւն է։

Աղօտանում, հանգչում է այն վիթխարի և լուսաւոր խարոյկը, որ դեռ մօտ ժամանակում լուսաւորում և ջերմացնում էր ռուս աշխարհը։ Քանի գնում, սակաւանում է այն մարդոց թիւը, որոնք վառ էին պահում նրա սրբազան բոցը։ Ոմանք արդէն չկան, ոմանք էլ հեռու են — այլոց կրակների մօտ են, վառւում են այլոց սեղանների առաջ։ Գ. Ա. Ջանշիեւը սակաւաթիւերից մէկն էր — նա ապրեց և մեռաւ վաթսունական թւականների խարոյկի մօտ։

Հասարակական և գրականական գործիչների մէջ ստէպ պատահում են այնպիսիները, որոնց ամբողջ կեանքի նպատակն է, անընդհատ տանջւելով, ճշմարտութիւն որոնել։ Հասարակական աշխարհա-

հայեցողութիւնը իրանց համար պարզաբանելու դժւար աշխատանքը դրանք կատարում են հրապարակօրէն, ամենի առաջ տպագրական խօսքի հրապարակում։

Դրանք մեղանչում են և զղջում, ընկնում են և կանգնում։ Հասարակական կարծիքի մասին դրանք այսօր ասում են. «Ահա ձեր Աստուածը, աղօթէ՛ք դրան». վաղը ասում են. «Այդ կուռք է, քարկոծէ՛ք դրան»։ Հոգեբանական տեսակէտից նայելով, այդ տեսակ մարդոց կեանքը լի է ողբերգական ինտերեսներով։ Այդ անձերի բարոյական գնահատութիւնը չափից դուրս բարձր կլինի — նրանք Աստուծու արքայութիւն մտնելու կարժանանան, որովհետև ահեղ դատաստանի ժամին Ստեղծողը իրան ներկայացողին հարց չի տայ, թէ «Դու արդեօ՞ք ճշմարտութիւնը ճանաչեցիր». այլ կհարցնի. «Փնտռեցի՞ր նրան»։ Բայց հրապարակախօսական քննադատութեան տեսակէտից, այդ տեսակ անհատների գործունէութիւնը միշտ դրական, բեղմնաւոր չէ երևում մեզ։ Իրանց գործունէութեան անցողական րոպէներին նրանք կարող են շփոթմունք մտցնել հասարակական գիտակցութեան մէջ։ Փոխանակ նպատակը ցոյց տալով և պարզաբանելով՝ ամրացնելու և զօրեղացնելու գիտակցութիւնը, նրանք գրգռում են այդ գիտակցութիւնը և թուլացնում են նրա եռանդը։ Այդպիսով վերոյիշեալ անձինք անհեռատես և թոյլ մարդոց սրտերում կարող են սերմանել — կրաւորականութիւն, դանդաղութիւն չգնել և անպտուղ կասկածոտութիւն։

Հանգուցեալ Գ. Ա. Ջանշիեւը պատկանում էր այդ տեսակ մարդկանց թւին։ Նրա նման անձերը իրանց հասարակական credo-ն մշակում են իրանց խղճի հետ առանձնանալով, ուրիշներից աննկատ, առանձնական կեանքի լռութեան ու մռայլի մէջ։ Նրանք հասարակական ասպարէզ են իջնում համոզմունքների և անընկճելի գաղափարների բոլոր զէնքերով—ասպարէզ են դուրս գալիս ժամանակից ոչ կանուխ, այլ միայն այն ժամին, երբ կարող են հասարակութեան ասել—ես գիտեմ, ուր է ճշմարտութիւնը և ուր սուտը։ Հետևի՛ր ինձ, քեզ կառաջնորդեմ դէպ առաջ և չեմ սխալի, արդէն անցած ուղիով յետ վերադառնալ։

Ջանշիեւի հաւատը պարզ և հասարակ էր։

Վաթսունական թւականները օրէնսդրական մտքի մի արտասովոր ստեղծագործութեան բարձրանալու ժամանակաշրջան էր։ Մեծ բարենորոգումները խոր, անանցանելի մի անդունդ բաց արին մինչև յեղափոխութիւնը և յեղափոխութեան պտուղները վայելող Ռուսաստանի մէջ։ Առաջինի հասարակական և տնտեսական կազմակերպութիւնը, բոլոր իր երևոյթներով, հիմնուած էր ճորտութեան սկզբունքի վրա, այսինքն՝ անհատի, նրա մարդկային արժանաւորութիւնը և քաղաքացիական իրաւունքները բացասելու սկզբունքի վրա։ Բարենորոգումների ազատարար բնաւորութիւնը կայանում է նրանում, որ անհատը ազատւեց պետութեան և արտօնուած դասակարգերի միահեծան տիրապետութիւնից։ Ճորտական իրաւունքի անկումը, քսաներեք միլիօն ժողովրդին, ստրուկ ժողո-

վրդին, անհատականութեան և աշխատանքի ազատութիւն շնորհեց. նա ապաքինեց Ռուսաստանը ստրկութեան «գարշելի ցաւագարութիւնից»։ Դէպի ազատարար բարենորոգումները տանող ուղին նա ընդլայնեց, որը ճորտատէր Ռուսաստանից իրաւարար մի պետութիւն ձևակերպեց։ Մարմնական պատիժները, որոնք դէմ էին մարդու անձնական արժանաւորութեանը և ազատ անհատի իրաւունքներին, դրանց վերացնելը 1863 թւին, ճորտական իրաւունքի անկման անհրաժեշտ հետևանքն էր։ 1863 թւի համալսարանական կանոնադրութիւնը, 1864-ի տպագրական օրէնքը մարդկային մտքի և խօսքի ժառանգաբար տիրող պետութեան իշխանութիւնից ազատւելու առաջին քայլերն էին։ 1864 թւի զեմստւային և 1870-ի քաղաքային բարենորոգումները ժողովրդի տնտեսական կեանքը ազատեցին հին, մինչև բարենորոգումները գոյութիւն ունեցող վարչութեան ամենազօր խնամակալութիւնից, որ անսահման հսկողութեան և կամայականութեան հողի վրա առատօրէն աճող մոլախոտերի նման՝ ախտերով էր վարակւած։ Վերջապէս՝ 1864-ի դատաստանական բարենորոգումը, «որը Ռուսաստանին պարգևեց այն բոլորի համագումարը, որի մասին ամբողջ դարերի ընթացքում մտածում էր մարդկութիւնը արդարադատութեան շրջանում», ահա այդ դատաստանական բարենորոգումն էր, որ առաջին անգամ ապահովեց ռուս հասարակութեան այն անհատական ազատութիւնը, որ Մոնտէսկիոյի ճիշտ նկատողութեան համեմատ՝ կայանում է նրանում միայն, որ քաղաքա-

ցին զգում է իր իրաւունքների անձեռնմխելի լինելը և որպիսի իրաւունքները խլել կամ նւազել կարող են դատաստանի և օրէնքի զօրութեամբ միայն։

Զանշիևի՝ մեծ դատաստանական օրէնքներին ակնածութեամբ վերաբերւելը, յատկապէս մեզ, իրաւաբաններիս համար՝ թանգ է։ Խօսելով անհամար «խայտաբղետ» նաւելլաների մասին, որոնցով ամեն կողմից ծեփւած էր դատաստանական օրէնքների փայելչաւես, հոյակապ շէնքը, Զանշիևը յիշում է Կոնստանդնուպօլսի Սօֆեայի տաճարը, որը իր նախնական ձևը բոլորովին կորցրեց այն կոպիտ ծեփերի կուտակման և աւելցրած շէնքերի շնորհիւ, որ կատարեց մուսուլմանական բարեպաշտութիւնը եռանդով։ Նա ասում է, որպէսզի կարողանաս նշմարել նրա նախնական, ամբողջացրած յատակագծի աղօտ նշոյլը, պէտք է աչքերդ վեր բարձրացնես դէպի նրա կլասիկ ճշտութեամբ կերտւած հրաշագեղ գմբէթի ուրւագիծը և այն ժամանակ միայն կարող ես տեսնել այն խոր մտքի և պայծառ իդէայի ճաճանչները, որոնք փայլում էին այդ տաճարը կերտողի աչքի առաջ և որոնց հանգցնել չկարողացաւ իսլամի բոլորովին պարզամիտ մոլեռանդութիւնը։ Եւ այդ տաճարը իր նախնական գեղեցկութեամբ և փառահեղութեամբ վերանորոգելու մասին Զանշիևը մի ժողովրդական առասպել է պատմում։

Dum spiro—spero, սիրում էր կրկնել Զանշիևը։

Նա հաւատում էր վերածնութեան հրաշագործութեանը, որի մասին Պուշկինը հետևեալ տողերն է գրել—

Художникъ—варваръ кистью сонной
Рисунокъ генія чернитъ
И свой рисунокъ беззаконный
Надъ нимъ безсмысленно чернитъ;
Но краски чуждыя съ лѣтами
Спадаютъ ветхой чешуей,
Созданіе генія предъ нами
Выходитъ съ прежней красотой.

Եւ Զանշիևը որպիսի յոյզերով, որպիսի սրտի անձկութեամբ, մերթ յուսալով, մերթ յուսահատւելով էր հետևում դատաստանական օրէնքները վերացնող Մանաժողովի պարապմունքներին։

Ի՞նչ խնդութեամբ էր նա ողջունում հին սկզբունքների դէմ տարած իւրաքանչիւր նոր յաղթանակը—օրինակ՝ 1898-ի փետրւարի երկու նաւելլան, որ ընդլայնեց երդւեալ դատարանի գործունէութեան մթնոլորտը։ Եւ որպիսի բուռն ցանկութեամբ նա կամենում էր, որ Մանաժողովը դատաստանական օրէնքների հետ գինին նոր տկերի մէջ ածելիս, այդ բիւրեղանման թանկագին հեղուկի մի կաթիլն անգամ չթափւէր։

Բոլորն անցնում է։ Հանգստեան քունի ժամանակամիջոցին դարձեալ կփոխարինէ եռանդ, ոյժեր բարձրացնող, վերածնող ժամանակամիջոցը։ Երբ կյիշեն «մոռացւած խօսքերը» — այն ժամին կյիշեն և նրանց հռչակը տարածող Զանշիևին, և այն պսակների վրա, որ մենք դնում ենք տխրութեամբ նրա գերեզմանի վրա, մեր որդիները սրտի ցնծութեամբ կաւելացնեն նորերը։

(Право, № 30, 1900 թ.)

ԵՐԿՈՒ ՄԱՀ *)

(Ցաւալի տեղեկութիւններ)

IV.

Наивная и страстная душа,
Въ комъ помыслы прекрасные кипѣли
Упорствуя, волнуясь и спѣша,
Ты честно шелъ къ одной высокой цѣли
Кипѣлъ, горѣлъ и быстро ты угасъ!

Некрасовъ.

Какъ женщину, ты родину любилъ.

Некрасовъ.

......Անկարելի է, հնար էլ չկայ որևէ համեմատութիւն անել: Անկարելի բան է, որ միւս թարմ գերեզմանը (խօսքը հանգ. Գ. Ջ-ի մասին է) դէպի ինքն չգրաւէ բոլոր ազնիւ ռուս անձերի ուշադրութիւնը, բոլոր այն անձերի, որոնց համար թանգ է «ամէն կոչումներից ամենասրբազանը—մարդ կոչումը»: Յուլիսի 17-ին, օրւայ 4 ժամին վախճանւեց Գր. Ա. Ջանշիևը:

Հաւատալ անկարող եմ, որ կրթւած ռուս հասարակութեան մէջ գտնւեն անձինք, որոնց համար Ջանշիևի անւան հետ կապւած չլինէր մի շարք այլ

*) Այս յօդւածի առաջին մասը վերաբերւում էր հռչակաւոր փաստաբան Իշխան Ա. Ի. Ուրուսօվին, ուստի չթարգմանեցինք:

փառաւոր անուններ, մի շարք գործողութիւններ «անմոռանալի թագաւորութեան տասնաբանեայ տախտակների վրա գրւած», մի շարք գաղափարներ, որոնցից աւելի վսեմ, մաքուր դեռ մարդկային հանճարը ոչինչ չէ արտադրել:

Ծագումով հայ լինելով և ոչ միանգամ չմոռանալով իր եղբայրներին, նա հոգւով աւելի ռուս էր, քան թէ մեր արինակից հարազատները: Երդւեալ հաւատարմատարի կոչումն ունենալով, նա մշտապէս, համարձակ և բուռն ցանկութեամբ պաշտպանում էր իր մշտական կլիենտին—այսինքն՝ 1864 թւի դատաստանական օրէնքները: Նա այդ օրէնքները այնպէս էր սիրում, ինչպէս ուրիշները միմիայն կին են սիրում—ամենայն բոցավառութեամբ և կրքով: Նա ինչպէս մի քնքոյշ, պառաւ, հնաւուրց դայեակ, իր փայփայած մանկան նման խնամում էր այդ օրէնքները: Նա նրանց աստւածացնում էր. նրանց երկրպագում էր որպէս մի կուռքի, որից բարձր ուրիշ ոչինչ չէր ճանաչում: Իւրաքանչիւր մի «նաւելլա», իւրաքանչիւր յանդուգն փորձ, որ աքնում էր ոչնչացնել այն հրաշալի շէնքը, որ ստեղծել էին դատաստանական օրէնքների «արարչագործող»ները, նրա ձայնակցող և զգայուն սրտին ցաւ էր պատճառում: Նա մեծ սկզբունքների պաշտպանի դերը իր վրա առնելով, ամենայն արթնութեամբ հետևում էր կառավարութեան կամ հասարակութեան տրամադրութեան ամենաչնչին փոփոխութիւններին անգամ: Եւ երբ հրապարակական, ողորմած, արդար, ամենի համար հաւասար դատարանին դէմ մի որ և է չնչին

վտանգ էր սպառնում, իսկոյն լսելի էր լինում նրա բորբոքուած ձայնը, նրա զօրեղ, համոզուած խօսքը։ Թոյլ տանք անգամ, որ այդչափ ջերմ պաշտպան հանդիսանալու առիթն այն էր, որ այդ գաղափարները իր սիրած գաղափարներն էին—բայց չէ՞ որ ամբողջ աշխարհին յայտնի ամենալաւ բանը նա էր սիրում։ Թոյլ տանք, որ շատ կարելի է, այդ գաղափարները պաշտպանելիս, նա երբեմն կասկածոտութեան էր հասնում. բայց ի՞նչ մեղք։ Չէ՞ որ նրա «սրբազան անհանգստութիւնը» երբէք մասնաւոր բնաւորութիւն չէ ունեցել։ Այն ինչ, քանի որ ապրում էր նա, քանի որ նա ձեռին բռնած ունէր «դանակից սուր—գրիչը», մինչև այդ ժամը և գոյութիւն ունէր այն համոզմունքը, թէ՛ դէպի դատաստանական օրէնքները ուղղուած ոչ մի գնդակ, նրա տակ փորուած ոչ մի ական աննկատ չի անցնի, առանց համարձակ, ազնիւ և ճշմարիտ պատասխանի չի մնայ։ Գրիգոր Աւետովիչը ձեռնահաս կլինի բոլորը պարզաբանել, նա դատաստանական վերանորոգումների պարագլուխ Ս. Ի. Զարուդնըյի կեանքի ամենալաւ գործը անպատուութեան չի մատնի. նա միշտ կունենայ պաշտպանելու այն մարդոց լուսաւոր յիշատակները, որոնք իրանց անձը զոհեցին ռուսական դատարաններում «արդարութիւնն ու ողորմածութիւնը» թագաւորեցնելու համար։ Եւ այդ մարդը մեռաւ։

Բաւական չէ ասել, թէ՛ ծանր է կորուստը։ Այդ կորուստը անփոխարինելի է, եթէ միայն աշխարհումս մի անփոխարինելի բան կայ։ Եւ իրաւ ո՞վ կցանկայ և ձեռնահաս կլինի այդ պահապանի դերը

գրաւել։ Այնքա՜ն բուռն ցանկութիւն, անքա՜ն համոզմունք, այնքա՜ն համարձակութիւն, գիտութիւն, խելք, այնքա՜ն աշխատասիրութիւն, այնքա՜ն անկաշառ սէր դէպի դատաստանական օրէնքների մեծ սկզբունքները ո՞վ կգտայ իր մէջ։

V.

Я рано всталъ: недолги были сборы
Я вышелъ въ путь, чуть занялась заря.

Некрасовъ.

Блаженъ, кто жизнь въ борьбѣ кровавой
Въ заботахъ тяжкихъ истощилъ

Плещеевъ.

Նա ծնուեց 1851 թուին Տփխիսում հայ ընտանիքի մէջ։ Տփխիսում գիմնազիական դասընթացը աւարտելուց յետ, մտաւ Մոսկուայի համալսարանը, ուր 1874-ին աւարտեց իրաւաբանական մասը։ Հէնց այդ թւականից էլ սկսեց նրա գրական գործունէութիւնը, որ և առանց ընդհատուելու տևեց մինչև նրա կեանքի վերջին օրերը։ Գրիգոր Աւետովիչի գրական աշխատանքը ամբողջապէս նուիրուած էր ռուսաց նորագոյն պատմութեան ամենափառաւոր շրջանի—«Մեծ բարենորոգումների» ուսումնասիրութեանը։ Գրիգոր Աւետովիչը հիմնուելով գիտնական նիւթերի ուսումնասիրութեան վրա, Աղէքսանդր Բ-ի դատաստանական օրէնքներին վերաբերեալ պատմուածքների մի ամբողջ շարք նկարեց, որոնք սկզբում տպագրւում էին «Русск. Мысль» և «Вѣстникъ Европы» ամսագրերում և յետոյ

առանձին գրքերով լոյս տեսան. ահա նրանք—Страница изъ исторіи судебной реформы. Д. Н. Замятинъ» (М. 1883), С. И. Зарудый и судебная реформа» (М. 1889), «Основы судебной реформы» (М. 1891): Ամենաշատ հռչակ ստացաւ նրա «Изъ эпохи великихъ реформъ» մեծ աշխատութիւնը: Համեմատաբար կարճ միջոցում այդ գիրքը 7 հրատարակութիւն ունեցաւ: Բացի այդ աշխատութիւններից և բազմաթիւ լրագրական յօդուածներից, որոնք վերաբերւում են դատաստանական բարենորոգումներին, Գր. Աւետովիչը գրեց իր Կովկասեան ճանապարհորդութեան գեղեցիկ նկարագիրները—«Перлъ Кавказа» վերնագրով, որ չորս հրատարակութիւն ունեցաւ: Գ. Ա-ը մինչև վերջին րոպէները անխոնջ աշխատակցում էր «Русск. Вѣдомости»-ին: Նրա բազմաթիւ յօդւածները, որոնք գլխաւորապէս նւիրւած են եղել դատաստանական բարենորոգումների, իրաւունքի, դատաստանական և փաստաբանական գործնական պարապմունքների զանազան խնդիրներին, նոյնպէս և Ռուսաստանում կատարւող ներքին մեծ վերանորոգումներին, այդ յօդւածները միասին ժողովւած կարող էին մի քանի մեծածաւալ հատորներ կազմել: Հանգուցեալը վերջին տարիները իր յօդւածները տեղաւորում էր նաև «С.-Петерб. Вѣд.» լրագրում և այլ հրատարակութիւններում: Նրա գրչին են պատկանում նաև բազմաթիւ յօդւածներ, որոնց նպատակն էր կարեկցութիւն շարժել դէպի դժբաղդ տաճկահայերը: Դրանով էլ չբաւականանալով, Գ. Ա-ը լոյս ընծայեց—

«Братская помощь» գեղեցիկ ժողովածուն, որից ստացած ամբողջ արդիւնքը նա գործադրեց զրկւած հայերի կարիքները լրացնելու:

VI.

Оковы падали. Законъ
На вольность опершись превозгласилъ равенство
И мы воскликнули: «блаженство»!
О горе! О безумный сонъ!

Пушкинъ.

Исполненъ долгъ завѣщаный отъ Бога
Мнѣ грѣшному....

Пушкинъ.

Чѣмъ ночь темнѣй, тѣмъ звѣзды ярче.

Майковъ.

Վաթսունական թւականներին՝ հոգեկան զրութեան անսովոր բարձրանալուց յետ, մի շարք մեծ բարենորոգումներից զկնի, ինչպէս յայտնի է, վրա հասաւ րէակցիա, որի նախակարապետները թեթև ծուխի նման տարածւում էին բարենորոգումների հորիզոնում, դեռ ևս դրանց ստեղծւելու ժամերին: Եւ որքան բարենորոգումների շրջանին թշնամի անձերը աւելի էին բարձրացնում իրանց ձայները, որքան անամօթ էին դառնում այն միջոցները, որ ձեռք էին առնում բարենորոգումները չարախօսողներից ոմանք, այնքան աւելի զօրեղ էր լսւում այդ մարդասիրական գաղափարների այդ փառաւոր պաշտպանի ձայնը, որ ասպարէզ դուրս եկաւ Ռուսաստանի վերածնութեան սրբազան գործը պաշտպանելու: Եւ նա մի՞թէ

միայն դատաստանական բարենորոգումների ազնիւ բանաստեղծ — ժամանակագիր դարձաւ: Ոչ: Նա երգեց նաև ռուս աշխարհի բոլոր մեծ բարենորոգումների մասին, նա երգեց այն բոլորը, ինչոր Ռուսաստանի հպարտութիւնն ու փառքն էին կազմում:

О людяхъ великихъ
..... онъ пѣлъ и хвала
Его непритворна была.

Եւ իր հետամուտ հայեացքը ներս թափանցելով իր սիրած ժամանակաշրջանի խորքերը, նա դատական բարենորոգումներին վերաբերեալ 74 հատոր գիտնական գործի մէջ (որպիսի բազմահատոր ձեռագրերը մինչև Գ. Ա.-ի օրերը համարեա ռուս հասարակութեան անյայտ էին) գտաւ անսպառ նիւթ մտնիկ «անմոռանալի—բայց աւաղ շատ շուտ մոռացուած» անցեալի պատկերները վերականգնելու: Նա ռուս հասարակութեան այդ անցեալն էր յիշեցնում, որպիսի հասարակութիւնը և այդ բոլորի համար մեծ շնորհակալութիւն պիտի տայ նրան: Գ. Ա.-ի վառվռուն գրչի տակ ամբողջ հասակով յարութիւն առան Ազատարար — Թագաւորի կենդանի և վախճանուած նիզակակիցները:

Դատաստանական բարենորոգումների պարագլուխ Ս. Ի. Զարուդնըյ, ճորտական բարենորոգումների պարագլուխ Ն. Ա. Միլիւտին, Վ. Ա. Արցիմովիչ, Դ. Ա. Ռովինսկի, Ն. Ա. Բուցկովսկի, Վ. Ն. Զամիատին, կոմս Դ. Ն. Միլիւտին, Ա. Մ. Ունկովսկի, Ն. Ի. Ստոեանովսկի, ահա թէ որոնց հետ էր Զանշինը

հոգւով կապուած, ահա թէ որոնց պատկերներն էր նրա աչքի առաջ—

И если загробная жизнь намъ дана
Онъ, здѣшней вполнѣ отдышавшій,
И въ звучныхъ глубокихъ отзывахъ сполна
Все дольное долу отдавшій,
Къ Предвѣчному легкой душой возлетитъ
И въ небѣ земное его не смутитъ.

Նրա համար թանգ սուերները այնտեղ են: Այնտեղ կհանդիպի նա ռուս աշխարհի զօրաւոր հսկաներին, որոնց նա այնպէս սքանչացնող ուժով երգեց:

Այնտեղին սրտերով մաքուր, մտքերով մեծ, գործերով հռչակուած, ստրկութիւնից և անարդարութիւնից ազատուած Ռուսաստանի հայրերը, նրանք գրկաբաց կընդունեն դէպի իրանց գնող իրանց հաւատարիմ որդուն: Ճշմարտութեան համար մղւող կռւում նրա տանջուած հոգին այն շրջանում անդորրութիւն կգտնի:

Եւ եթէ ռուսական արդարադատութիւնը կենդանի մարդ լինէր և եթէ այդ անաչառ վերացականութիւնը կարողանար մարդկային կերպարանք առնէր, շնորհակալութեան և վշտի որպի՜սի այրող արցունքներով պիտի թրջէր այդ թարմ գերեզմանը և որպի՜սի ծանր հառաչանք պիտի դուրս թռչէր նրա կրծքից..... Լ. Օ. Վար.:

(Юридическая Газета № 50, 1900 թ.)

Գ. Ա. ՋԱՆՇԻԵՒԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ։

...Որպէ՞ս սիրտ դատարկ բաբախել...

Յուլիսի 17-ին Մոսկւայում կնքեց իր մահկանացուն Գրիգոր Աւետովիչ Ջանշիեւ։ Յանձին նրա՝ ասպարիզից իջաւ համոզմունքի տէր մի անձ, ազնիւ հրապարակախօս, փայլուն գրող, տանջւածների և հալածւածների մտերիմ բարեկամ։ Նրա մահը անսպասելի չէր նրանց համար, ով ծանօթ էր հանգուցեալի առողջական դրութեանը. բայց ամենքը ընտելացել էին այդ դրութեանը—թէ Գ. Ա.-ը երբէք առողջ չէ եղել. մինչև անգամ վերջին տկարութիւնը բոլորը համարում էին նրա օրգանիզմի թուլութեան սովորական երևոյթներից մէկը։ Ինքն անգամ դէթ մի րոպէ չէր մտածում, որ իր վախճանը մօտենում է։ Մահւանից մի քանի ժամ առաջ խօսակցում էր իր բարեկամների հետ, կատակներ էր անում և իր տկարութեան առիթով նրանց անհանգստանալը բարեսրտութեամբ ծաղրում էր։ Բայց ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել և ռուսաց տպագրական խօսքի փոքրիկ ընտանիքի գործիչների շարքից պակասեց լաւագոյն անդամներից մէկը։

Գ. Ա. Ծնւեց Տփխիսում 1851 թւին չքաւոր հայ ընտանիքում։ Տասերկու տարեկան հասակում տարւելով Մոսկւա, տեղաւորւեց արևելեան լեզուների

Լազարեան ճեմարանում։ Այդտեղ փայլուն կերպով աւարտելով ուսման ընթացքը, մտաւ Մոսկւայի համալսարանի իրաւաբանական մասը և 1874 թւին աւարտելով բարձրագոյն կրթութիւնը, այն օրից գրիչ առաւ ձեռը։ Նրա առաջին տպագրւած յօդւածը մի հաշիւ էր, որ լոյս տեսաւ «Судебная Газета» լրագրում։ Փոքր անցած, նա մտաւ «Русск. Вѣдом.» լրագրի շրջանը, որի հետ նրա բարեկամական մօտ յարաբերութիւնը չընդհատւեց մինչև կեանքի վերջին րոպէները։ Նա այդ լրագրի հրատարակիչներից և ամենագործունեայ աշխատակիցներից մէկն էր։ Յետոյ նա սկսեց աշխատակցել միւս ամսագրերին, գլխաւորապէս «Вѣстникъ Европы» և «Русск. Мысль» ամսագրերին, իսկ վերջին անգամները, բաւական յաճախ, յօդւածներ տեղաւորում էր նա և ամենօրեայ ու շաբաթական հրատարակութիւններում («Право», «Сѣверный Курьеръ,» «С.-Петерб. Вѣд.» եայլն)։ Աւելի նշանաւոր յօդւածները փոքր առ փոքր հրատարակւում էին առանձին գրքերով, որոնք հետևեալներն են—«Страница изъ исторіи судебной реформы», «Д. Н. Замятинъ», «С. И. Зарудный и судебная реформа», «Основа судебной реформы», «Эпоха валикихъ реформъ»։ Բացի այդ՝ նա գրել է օրւայ չարիքի բնաւորութիւն կրող երկու նկարագրութիւն (очеркъ)—«Веденіе неправыхъ дѣлъ» և «Судъ надъ судомъ присяжныхъ»։ Ունի նաև ճանապարհորդական նկարագիրներ (մի սերիան—«Перлъ Кавказа», նորերս լոյս տեսաւ չորրորդ հրատարակութեամբ). ունի

նոյնպէս հրատարակած մի քանի ժողովածուներ հայկական հարցի մասին։

Գ. Ա. Ջանշիևի գործունէութիւնը ամբողջովին յափշտակուած մի գործունէութիւն էր։ Այդ յափշտակուած դրութիւնը մի փայլուն և բեղմնաւոր առանձնայատկութիւն ունէր — գործելու յատկութիւն իր իսկական նշանակութեամբ։ Ջանշիևը պլատոնական սիրով յափշտակուելու ընդունակ չէր։ Նա ծառայում էր այն բանին, ինչոր սիրում էր և ծառայում էր այնպէս, որպէս սակաւներին է վիճակուած։ Նա հէնց առաջին անգամից յափշտակուեց մեծ բարենորոգումների ժամանակաշրջանով, նրա փայլուն սկզբունքներով, նրա ազնիւ գործիչներով, նրա կենդանի, մարդասէր, աշխոյժ ոգւով.... Ճորտերի ազատութիւնը, դատաստանական օրէնքները, համալսարանական անկախութիւնը, զեմստւային և քաղաքային ինքնավարութիւնների հիմք դնելը, դրանք էին ահա այն իրողութիւնները, որոնցից ամբողջ կեանքի ընթացքում չհեռացրեց իր հայեացքը, դէպի որոնց և իւրաքանչիւր տարելիցին հրաւիրում էր հասարակութեան ուշադրութիւնը «Русск. Вѣд.»-ի էջերում, որոնց և նուիրուած են նրա աշխատութիւնները, իրանց գլուխ ունենալով «Մեծ բարենորոգումների շրջան» երկասիրութիւնը։

Ի՞նչ բան է «Մեծ բարենորոգումների շրջանը»։ Իսկական մտքով առած, պատմաբանի աշխատութիւն չէ այդ։ Այդ երկի մէջ ընթերցողը զուր կփնտրէր վաթսունական թւականների զանազան դէպքերի բազմակողմանի լուսաբանութիւն, զուր կփնտրէր այդ

շրջանի քննադատութիւնը։ Այդ բոլորը պակաս է այնտեղ։ Բայց նրա մէջ ինչոր մի վսեմ բան կայ։ Երբ թռուցիկ ակնարկով անցնում ես այդ ստուար հատորի էջերը, որոնք այնքան անխարդախ, այնքան անկեղծ ոգևորութեամբ են ներշնչուած, ակամայից յիշում ես Միշլէի «Յեղափոխութեան պատմութիւն»-ը և նրա ունեցած նշանակութիւնը հեղինակին ժամանակակից հասարակութեան համար։ Քննադատութեան տեսակէտից Միշլէի գիրքը թոյլ է։ Նոյն է և Ջանշիևինը։ Բայց Միշլէի այն վսեմ հիացմունքը (энтузiазмъ), որով թափանցուած է նրա գիրքը, այն ջերմ զգացումը, որով հեղինակը խօսում է 89 թւի մեծ սկզբունքների մասին, այն հմուտ պատկերները, որոնցով յարութիւն է առնում հինը և կեանք են ստանում անցած դէպքերը, այդ բոլորը իր դերը կատարեց 40 թւականների վերջում և 50-ական թւերի սկզբում, երբ ֆրանսիական հասարակութիւնը սկսել էր մոռացութեան տալ այն, որով ապրում էր։ Նոյն է և mutatis mutandis «Բարենորոգումներ ժամանակաշրջան»-ի նշանակութիւնը։

Գիրքը առաջին անգամ լոյս տեսաւ 1891 թւին։ Ժամանակամիջոցը կրիտիքական էր։ Վաթսունական թւականների շէնքը քանդելու գործը ամենաեռուն դրութեան մէջ էր. այն, ինչին որ ականատես եղան ութսունական թւականները, փլչելու վտանգ էր սպառնում. արդէն երևան էին գալիս զանազան մութ աւելցուկներ (наростъ).... Նոր հոսանքները խոստանում էին իրանց պտուղները տալ և հրապարակախօսները պարագլուխ ունենալով

Շելգունովին, արդէն որոշում էին ութսունական թւականների homo sapiens սերնդի նոր բազմատեսակութիւնը: Հէնց այդ ժամանակամիջոցին խօսել սկսեց Ջանշիևը վաթսունական թւականների մասին: Այդ ժամին յարութիւն առնել սկսան նրա գրչի տակից այդ ժամանակաշրջանում գործողների փայլուն դէմքերը. մոռացած խօսքերը, մոռացած սկզբունքները գրաւիչ կերպով արտայայտելու շնորհիւ, մուտք գտան հասարակութեան մէջ. գրքից անցեալի բերկրառիթ սթափման կենսատու ներշնչումն էր բուրում... Իսկապէս ժամանակակից հասարակութեանը հարկաւոր էր այն լեզուն, որ գործ էր ածում Ջանշիևը և այն ոգին, որով ներշնչւած էր նրա գիրքը: Վաթսունական թւականների մասին, ի հարկէ, ամենքն էլ գիտէին, բայց կարիք էր զգացւում մի բանաստեղծի, որպէսզի փառաւոր ժամանակաշրջանը կենդանութիւն ստանար, հարկաւոր էր մի վարպետ, եռանդոտ տրամադրութիւն, որպէսզի յուսահատութիւն չտիրէր: Եւ Ջանշիևը կարողացաւ տալ այդ բոլորը: Նա, որին կվիճակւի ռուս հասարակութեան դաստիարակութեան պատմութիւնը գրել, չի մոռանայ Ջանշիևի անունը: Ապացոյց — գրքի չտեսնւած յաջողութիւնն էր (8 տարուայ ընթացքում լոյս տեսաւ 7 անգամ, 8-դի վրա աշխատելիս Ջանշիևը մեռաւ). այդ յաջողութիւնը աւելի է ընդգծում դիւային խաւարամտութեան կամաւորների նախանձը, որը Ջանշիևը իր հետ գերեզման տարաւ:

Ջանշիևը յափշտակւած էր և մի ուրիշ բանով. այդ նրա՝ Տաճկաստանում հարստահարւած ազգակիցներն էին: Սասունի ջարդը և նրան հետևող կոտորածը, քրիստոնեաների դէմ հալածանքը XX-րդ դարի շեմքում, քրդերի և տաճիկ զինւորների ձեռքով սարսափելի տանջանքների մէջ մեռնող հարիւր հազար զոհերը, բաղդի հաճոյքին յանձնւած հազարաւոր որբերը, ամբողջ ազգը, որ առանց Եւրոպայի օգնութեան սովի զոհ կլինէր, հայ ազգաբնակութեան անէծքի առարկայ դարձած օպերետային բարենորոգումները, ամեն օր, ամեն րոպէ նոր բռնկումն սպառնացող արևելքի վայրենի ոգիների անզուսպ կրքերը — ահա այն պատճառները, որոնք խոր խոցւած Ջանշիևին հարկադրեցին, ըստ չափու կարողութեան, Տաճկաստանի չարատանջ հայերին օգնութիւն հանելու ձեռնարկել: Նախ՝ «Положеніе Армянъ въ Турцій», յետոյ՝ «Братская Помощь»-ի երկու հրատարակութիւնները, որոնք նրան մեծ աշխատութիւն պարգևեցին, խլելով նրա վերջին ուժերը, առողջութեան վերջին պաշարը — այդ հրատարակութիւնները նրան միջոց տւին մօտ 60,000 րուբլի Տաճկաստան ուղարկել և առ կենդանութեամբ՝ որբերի համար 12 ապաստանարան բանալ: Եւ այդ բոլորը կատարւեց մի ինչոր 3-4 տարուայ ընթացքում: Նրա այդ գործունէութիւնը ի նկատի ունենալով, ամենայն հայոց Պատրիարք Կաթողիկոսը պատւիրեց բոլոր հայոց եկեղեցիներում նրա յիշատակին հոգեհանգիստներ կատարել:

Դեռ մօտ ժամանակում, անցեալ տարի նոյեմբերին տօնուեց Ջանշիեւի գրական գործունէութեան 25 ամեայ յոբելեանը։ Փայլուն էր այդ օրուայ տրամադրութիւնը. նրան պատուելու ժողովուել էր Մոսկուայի ամենալաւ տարրը. շնորհաւորութիւններ ստացուեցին Ռուսաստանի ամենալաւ տարրերից։ Այժմ նրան գերեզման իջեցրին. բայց նրա անթիւ ընթերցողները դեռ երկար ժամանակ կյիշեն «Բարենորոգումներ ժամանակաշրջան»-ի հեղինակին։

Ա. Ջիվելեգով։

(Міръ Божій № 9, 1900 թ.)

ԵՐԿՈՒ ՄԱՀ

(Մահացուցակ)

Յուլիսի 17-ին Մոսկուայից տրուած հեռագիրը լրագրութեան միջոցով ընթերցող Ռուսաստանին հաղորդեց նշանաւոր և տաղանդաւոր ռուսաց գրող և հրապարակախօս Գրիգոր Աւետովիչ Ջանշիեւի յանկարծական մահուան մասին։ Ի հարկէ իւրաքանչիւր ռուս ընթերցող անհատին ծանօթ է Ջանշիեւի անունը։ Այդ անունը թանկ է նրանցից իւրաքանչիւրին, որի համար թանկ է մեծ բարենորոգումներ փառաւորող ժամանակաշրջանի պայծառ յիշողութիւնները, որպիսի ժամանակաշրջանի տաղանդաւոր և կարող երգիչը Գրիգոր Աւետովիչն էր։

Ջանշիեւը ծնուեց Կովկասում 1851 թւին։ Ծագումով հայ ընտանիքից էր. նա կրթւում էր Տփխիսի գիմնազիայում, իսկ յետոյ՝ 1864-ին աւարտեց Մոսկուայի համալսարանի իրաւագիտական բաժնի գիտութիւնների ընթացքը։ Ջանշիեւը ոչ մի ծառայական ասպարէզ չմտաւ, համալսարանը աւարտելու օրից սկսած մինչև կեանքի վերջին օրերը, բոլոր իր ուժերը և տաղանդը գրական աշխատանքի նուիրեց։ Միևնոյն ժամանակ նա Մոսկուայի շրջանի դատաստանական պալատի երդուեալ հաւատարմատար էր։

Գրիգոր Աւետովիչը ասպարէզ եկաւ մի շարք յօդուածներով, որոնք վերջը միանալով, կազմեցին «Изъ эпохи великихъ реформъ» անունով ժո-

ղովածուն։ Այդ յօդուածների համար նա իր նիւթը քաղում էր գլխաւորապէս բարենորոգումների ծրագիրը մշակող յանձնաժողովի աշխատութիւններից. նա հիմնաւոր կերպով ծանօթ էր գրականութեան մէջ արծարծուող այն բոլոր հարցերին, որոնք կապ ունէին բարենորոգումների հետ։

Ջանշիեւը մեզ տուեց մեծ ժամանակաշրջանի հռչակաւոր գործողների մի շարք կենսագրական ակնարկներ։ Պարոն «Վառ»ը հանգուցեալ Գրիգոր Աւետովիչի յիշատակին համակրելի խօսքեր նուիրելով «Юридическая Газета» լրագրի 50 համարում, հետեւեալ տողերն է գրում—

«Դատաստանական բարենորոգումների պարագլուխ Ս. Ի. Զարուդնիյ, ճորտական բարենորոգումների պարագլուխ Ն. Ա. Միլիւտին, Վ. Ա. Արցիմովիչ, Դ. Ա. Ռովինսկի, Ն. Ա. Բուցկովսկի, Դ. Ն. Զամիատին, կամ Դ. Ա. Միլիւտին, Ա. Մ. Ունկովսկի, Ն. Ի. Ստօեանովսկի — ահա թէ որոնց հետ էր Ջանշիեւը հոգւով կապուած, ահա թէ որոնց պատկերներն էին նրա աչքի առաջ —

И если загробная жизнь намъ дана,
Онъ, здѣшней вполнѣ отдышавшій,
И въ звучныхъ глубокихъ отзывахъ сполна
Все дольное долу отдавшій,
Къ предвѣчному легкой душой возлетитъ
И въ небѣ земное его не смутитъ.

Նրա համար թանկ ստուերները այնտեղ են։ Այնտեղ կհանդիպի նա ռուս աշխարհի զօրաւոր հսկաներին, «որոնց նա ինքը այնպէս սքանչացող ուժով երգեց»։

Այնտեղ են սրտով մաքուր, մտքով մեծ, գործով հռչակուած — ստրկութիւնից և անարդարութիւնից ազատուած Ռուսաստանի հայրերը, նրանք գրկաբաց կընդունեն դէպ իրանց դիմող իրանց հաւատարիմ որդուն։ Ճշմարտութեան համար մղուող կռւում նրա տանջուած հոգին այնտեղ, այն շրջանում անդորրութիւն կգտնի»։

Իր «Մեծ բարենորոգումների ժամանակաշրջանից» գրքի ճակատին, որ ամենակարճ միջոցում եօթ հրատարակութիւն ունեցաւ, Գ. Ջանշիեւը դրօշմել էր բանաստեղծի հետեւեալ խօսքերը. «Чѣмъ ночь темнѣй, тѣмъ ярче звѣзды».

Ջանշիեւը իր հեղինակութիւնները տպագրում էր՝ «Русск. мысль», «Вѣстникъ Европы», և «Жизнь» ամսագրերում, բայց գլխաւորապէս նա աշխատակցում էր «Русск. Вѣдомости» լրագրին, որի և հրատարակիչներից մէկն էր նա մինչև իւր վերջին օրերը։

Իր փաստակները գնահատելու գործում խիստ համեստ լինելով, Գրիգոր Աւետովիչը միշտ ասում էր, «Ես մի գիւղական մուկն եմ միայն, իմ նիւթերը բոլորը անցեալին են պատկանում, միայն պատմական տեղեկութիւններ կարող եմ տալ...»

Ծագումով հայ լինելով, Գրիգոր Աւետովիչը միշտ ջերմ սիրում էր իւր համազգիներին և խոր վշտանում էր հայերի համար ծանր՝ տաճկական կոտորածների օրերին։ Մորթուածների երեխաներին, հայ որբերին օգնելու համար Ջանշիեւը հրատարակեց «На помощь» հաւաքածուն, որ նոյնպէս եր-

կու տպագրութիւն ունեցաւ: Նոյն այդ հայ մանուկներին օգնելու ֆոնդին Գրիգոր Աւետովիչը սովորաբար նուիրում էր իր վերջերս ստացած ամբողջ գրչավարձը (գոնորար):

Այժմ Գրիգոր Աւետովիչից անջատուելիս, բարոյական զգացմունքով մխիթարուած, կարող ենք ասել, որ տպագրական խօսքի ոյժը մեծ է, զօրեղ, երբ նա բղխում է ճշմարիտ և ազնիւ մարդուց, մի մարդուց, որ ամբողջովին անձատուր է եղել ազատութեան իդէալին և հայրենիքի ու հաւասարապէս ամբողջ մարդկութեան առաջադիմութեանը: Այդպիսի խօսքը քաջալերում է մեզ, մեր մէջ հաստատում է այն համոզմունքը, որ ոչ մի մեծութիւն երբէք իր նշանակութիւնը չի կորցնի:

Такъ храмъ разрушенный—все же храмъ,
Кумиръ поверженный—все же Богъ.

Ահա այն մակագիրը, որ Ջանշիեւ ընտրել էր իր գրական վաստակներից մէկի համար:

Գրչի համեստ մշակ հրապարակախօս Ջանշիեւ և պետական առաջին գործողներից մէկը — ստատս-սեկրետար Ստօեանօվսկին, որոնք ներկայումս գերեզման են իջել, իրարու բարեկամներ էին, որովհետև երկուսն էլ սիրում էին ազատարար շրջանի մեծ գործը: Երկուսի անունն էլ գրուած են մեր պատմութեան ամենալաւ էջերում: Թող ներկայում նրանց ծածկող հողը ծանրաբեռն չլինի. այն հողը, որը նրանք սիրում էին և որի համար աշխատում էին:

(Жизнь, № 8, *1900 թ.*)

Ներկայ ամսի խրոնիկան մեզ վիճակուած է աւարտել, յիշատակելով ռուս գրականութեան երկու ականաւոր գործիչների մահուան մասին: Յուլիսի 17-ին վախճանուեց Գ. Ա. Ջանշիեւ և նրանից ուղիղ երկու շաբաթ անցած — Վլ. Ս. Սօլօվեւ: Համարեա երկուսն էլ հասակակից էին, համարեա երկուսն էլ 70-ական թուերին միաժամանակ գրական ասպարէզ իջան, երկու հանգուցեալն էլ, իրանց բոլոր տարբերութեամբ, գրողներ էին, որոնք և կարողացան իրանց անունները հաւասարապէս դեռ երկար տարիներ գրել ռուս գրականութեան պատմութեան էջերում:

Նրանցից իւրաքանչիւրը իր ինքնուրոյն ուղիով էր ընթանում. բայց և այդ ուղիները իրար շփւում էին ընդհանուր կէտերում:

Գ. Ա. Ջանշիեւ համարեա առաջին անգամից մեր առաջ մի որոշակի, ամբողջացած դէմք ներկայացաւ: Նրա աշխարհահայեցողութիւնը պարզ, հասարակ էր: Նրա գրական գործունէութիւնը, համարեա, իր սկզբնաւորութեան օրից այն բնաւորութիւնը ստացաւ, որը և նա մինչև իր վերջին օրերը անփոփոխ պահեց: Նրա հասարակական հայեացքների հիմքը կազմում էր—իր արժանիքը խոստովանող և դէպի քաղաքացիական իրաւունքները ձգտելու տրամադրութիւն ցոյց տուող մարդկային անձի ազատ իդէալը—և Ջանշիեւ իր բոլոր համակրանքը անփոփոխ ու միշտապէս նուիրեց 60-ական և 70-ական թուերի ժամանակաշրջանին, որի ընթացքում և նրա

պաշտած (վերև յիշուած) իդէալը անխնայանի կերպով ռուսաց կեանքում իրագործւեց։

Հրապարակախօսի կոչումով Գր. Ջանշիևի մասին, նրա յիշատակին նւիրուած մահացուցակներից մէկը շատ ճիշտ էր արտայայտել, որ նա գրականութեան մէջ այն ժամանակաշրջանի երգիչը դարձաւ, որին ինքը «մեծ բարենորոգումների ժամանակաշրջան» անունով մկրտեց։ Նա, գլխաւորապէս, իր գործունէութիւնը նւիրեց ժողովրդականացնելու և պաշտպանելու այն սկզբունքները, որոնք ազատարար վերանորոգումների հիմք դարձան, որոնք առաջին անգամ Ռուսաստանում անձնաւորութիւնը ճորտական գրութիւնից հանեցին և նրան դէպի քաղաքացիական գոյութիւն հրաւիրեցին։

Բարենորոգումների ուսումնասիրութեանը նւիրած նրա մի շարք աշխատասիրութիւնները, որոնք նշանաւոր դարձրին 60-ական թւերը և 70-ականի սկիզբները, լրացան «Մեծ բարենորոգումների ժամանակաշրջանից» մի մեծահատոր գրւածքով, որ կարճ միջոցում 7 հրատարակութիւն ունեցաւ։ Թէև անխոնջ մշակը չարժանացաւ իրան ոգևորող իդէալի յաղթանակը տեսնել բայց այդ ապագայ յաղթանակը նախապատրաստելու համար նա շատ բան արեց և նրա անունը ռուս հասարակութեան գիտակցութեան մէջ անքակտելի կապերով երկար կապւած կմնայ այն ժամանակաշրջանի հետ, դէպի որը իր ընթերցողների սէրը և յարգանքը զարթեցնել գիտէր։

(Русск. Богатство № 8. 1900 թիւ).

ԻՇԽԱՆ Ա. Ի. ՈՒՐՈՒՍՕՎ ԵՒ Գ. Ա. ՋԱՆՇԻԵՒ

(Տխուր յիշողութիւն)

Մոսկւայի իրաւագիտութիւնը և նրա հետ ամբողջ ռուս հասարակութիւնը ծանր կորուստներ ունեցան։ Համարեա միաժամանակ Մոսկւայում վախճանւեցան իրաւաբաններ՝ իշխան Ալէքսանդր Իվանովիչ Ուրուսօվ և Գրիգոր Աւետովիչ Ջանշիև։ Նրանք երկուսն էլ լայնածաւալ հռչակ ունէին, երկուսն էլ արտաքոյ կարգի ժողովրդականութիւն էին վայելում, բայց նրանց թէ տաղանդի յատկութիւնն ու ծաւալը և թէ գործունէութեան բնաւորութիւնը ոչնչով իրար նման չէին.... *)

..... Որպէս փաստաբան՝ Գրիգոր Աւետովիչը շատ փոքր է յայտնի (մինչև անգամ չգիտեմ, առ հասարակ նա դատաստանական պրակտիկայով պարապում է՞ր թէ ոչ), բայց որպէս դատաստանական օրէնքների և Աղէքսանդր Բ-ի բոլոր լուսաւոր բարենորոգումների տաղանդաւոր և եռանդուն պաշտպան, նա լայնածաւալ և միանգամայն արժանի հռչակ էր վայելում։ Նրա «Эпоха судебныхъ реформъ» գիրքը, որ երկու տարի առաջ լոյս տեսաւ եօթներորդ հրատարակութեամբ, Ջանշիևին իրաւունք է տալիս

*) Այնուհետև խօսքը իշխան Ուրուսօվի մասին լինելով, մեր նպատակից դուրս համարեցինք թարգմանել։
Ծ. Թ.

վայելելու հասարակութեան դոհունակութիւնը և նրա անունը սերնդից սերունդ կանմահացնի: Մտերմութիւն և դէպի ճշմարտութիւնը անկեղծ սէր — ահա այդ գրքի արժանաւորութիւնը — դա սառը դատողութիւնների մի հաւաքածու չէ, այլ կենդանի խօսք: Ջանշիևը գրում էր իր նեարդերով, արիւնով և հէնց սրանումն էլ կայանում էր նրա յաջողութեան, մեծ ժողովրդականութեան ոյժը: Իր գրքի եօթներորդ հրատարակութեան վերնագիր էր ընտրել Իշխան Պ. Ա. Վեազեմսկու խօսքերը. «Մեր դարում հարկաւոր է մեռածներին կենդանացնել, որպէսզի դրանցով վախեցնենք և խրատենք կենդանի անամօթութիւնը, որից հեռացնել և որը մոռացնել կարողանանք այն բաց բերաններին, որոնք հիացմունքով երկրպագում են անամօթութեանը»: Եւ յիրաւի Գ. Ա. Ջանշիևը մեծ հմտութեամբ կեանք էր տալիս մեռածներին: Նրա գրչով նկարած Աղէքսանդր Բ.-ի ժամանակաշրջանի նշանաւոր գործողների լուսանկարները մեզ պատկերանում են իրանց ամբողջ մեծութեամբ և իրանց արժանաւորութիւններով ու պակասութիւններով հանդերձ: Ինչպէս բոլոր մեծ լուսանկարիչները թափանցելու ընդունակութիւն ունին, որի շնորհով պատկերի շրջանակի միջից մեզ նայում է մի կենդանի շունչ, հոգի, այնպէս էլ և Գ. Ա. Ջանշիևի «Տխուր տեղեկութիւն»-ների մէջ տեսնում ենք մեր առաջ կանգնած կենդանի մարդիկ, և ոչ թէ յայտնի անձերի գործունէութեան և կեանքի չոր ցամաք ու ծառայական ցուցակներ: Ջանշիևի մի քանի հայեացքների հետ կարելի էր չհամաձայնել:

Այն կրքոտութիւնը, որ նա մտցնում էր իր ամեն գործի մէջ, նրան երբեմն շատ հեռու էր տանում, բայց չյարգել նրա կարծիքները, անկարելի էր, որովհետև հեղինակը միշտ իր կարծիքներին հիմք դնում էր ազնիւ համոզմունք, բուռն ձգտում դէպի ճշմարտութիւն: Նա հաստատուն քայլերով հետևում էր Ն. Ի. Պիրոգովի պատգամին, թէ, անկարելի է չկրկնել այն, որի հիմքը ճշմարտութիւն է: Անցեալ տարի Գ. Ա. Ջանշիևի 25 ամեայ յոբելեանի առիթով նրա հրապարակախօսական գործունէութեան մասին մենք մի մանրամասն տեսութիւն արեցինք, ուստի բաւականանում ենք վերև յիշած մի քանի խօսքերով: Գ. Ա.-ն մեռաւ իր ոյժերի լիովին ծաղկած հասակում, մինչևանգամ 50 տարին չլրացրած:

Ն. Ս-օվ:

(С.-Петерб. Вѣдомости № 195, 1900 թ.)

ՋԱՆՇԻԵՒԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գրիգոր Աւետովիչ Ջանշիևի վաղաժամ մահւան տխուր լուրը կայծակի արագութեամբ տարածւեց Տփխիսում։ Այդչափ զգալի և անփոխարինելի կորուստը անասելի ծանր տպաւորութիւն արեց տեղական երիտասարդութեան վրա։ Այլևս չկայ արդարութեան և ճշմարտութեան համար անխոնջ մարտնչողը, չկայ քանքարաւոր գրական գործիչը, մեռաւ զրկւած սրտերի ոգևորւած երգիչը։ Այդ, իսկապէս, մեծաքանքար մարդու գրական գործունէութեան մասին մենք այստեղ ընդարձակ չենք խօսի, այլ ընդհանրապէս մի քանի խօսք կասենք այդ մասին։ Երբ տաճկական բարբարոսութիւնների շնորհով Տաճկահայաստանը մարդկային սպանդանոց դարձաւ, երբ հայոց դաշտերով հոսել սկսան քրիստոնեայ արեան հեղեղները, երբ եկեղեցիները սրբապղծելով, ոտնակոխ էին անում, երբ հայուհին նւաղում էր քիւրդի պիղծ գրկում, ահա իսկապէս այդ ժամին լսւեց Գրիգոր Աւետովիչի հուժկու ձայնը։ Այդ ժամանակ Եւրոպան ներգործական դեր չէր կատարում, նա լուռ դիտում էր, ինչպէս մոլեգնած տաճիկները ծաղրի էին մատնում հայ ժողովրդի սրբութիւն սրբոցը և աշխատում էին նրան ջնջել երկրի երեսից։ Մի շարք յօդւածներով և հրատարակութիւններով, («Армянскій вопросъ въ Турціи», «Положеніе Армянъ въ Турціи»),

որոնք թափանցւած էին քրիստոնէական վսեմ կարեկցութեամբ, որոնք արդարութիւն և ճշմարտութիւն էին արտայայտում, Գրիգոր Աւետովիչը ապացուցեց Բարձր Դրան քաղաքականութեան բոլոր գարշելիութիւնը։ Նա այդ հրատարակութիւններով ռուս հասարակութեան առաջ պատկերացրեց Տաճկաստանում ապրող հայերի իսկական դրութիւնը, որով և ռուս երիտասարդութեան հասկացող մասի մէջ կարեկցութիւն զարթեցրեց դէպի տաճկական մոլեռանդութեան զոհերը, որով կենդանի հետաքրքրութիւն յարուցեց դէպի բազմաչարչար հայերի ճակատագիրը, որոնց ընդունւած է մարդկային մեծ ընտանիքի խորթ զաւակներ համարել։ Նա առաջինը եղաւ, որ օգնութեան ձեռք կարկառեց դէպի զրկանքի մատնւած հայ որբերը, որոնք կոտորածներից յետ առանց յարկի և առանց մի կտոր հացի էին մնացել։ Գրիգոր Աւետովիչը որբերի օգնութեան գործին կանոնաւոր կազմակերպութիւն տալու համար 1897 թւին սկսեց հրատարակել «Братская Помощь» ժողովածուն, որը լոյս տեսնելու առաջին օրից սկսած գրական մեծ հետաքրքրութիւն յարուցեց, որպէս ռուս ընթերցող հասարակութեան, նոյնպէս և երկրագնդի զանազան կողմերում ցրւած հայերի մէջ։ Այդ հրատարակութիւնից գոյացած բոլոր արդիւնքը Գր. Աւետովիչը առանց ժամանակ կորցնելու փոխադրեց Տաճկաստան, դնելով այդ բոլորը ռուս կայսերական դեսպանի տրամադրութեան տակ, որը սիրառատ քրիստոնէի հոգատարութեամբ

որբանոցներ էր հիմնում թեթեւացնելու անբաղդ մանուկների դառը վիճակը:

Մեզ համար թանկ էր ոչ միայն Գրիգոր Աւետովիչի գործը, այլ և նրա անձնաւորութիւնը: Նա ճշմարտութեան և արդարութեան համար մի ազնիւ մարտնչող էր, նա, իսկապէս մի մարդասէր անձն էր. վերջապէս նա մի ազնիւ ռուս քաղաքացի էր: Իր այնքան բազմարդիւն կեանքով և գործունէութեամբ նա Ռուսաստանին էր պատկանում: Հայազգի լինելով, նա նախ՝ մարդ էր և ամէնը, ինչ որ մարդկային էր, իրան օտար չէր համարում: Անմահ Գոգոլի խօսքով ասենք — նա փաթստնական թւականների գաղափարները արտայոլացնում էր այնպիսի պարզութեամբ, այնպիսի մաքուր գեղեցկութեամբ, որպիսի պարզութեամբ և գեղեցկութեամբ արտացոլանում է հեռանկարը օպտիկական ապակու ուռուցիկ մակերեսյթի վրա —: Իր տաղանդաւոր գրչով Գրիգոր Աւետովիչը հարիւր հազարաւոր սիրող սրտերից մի յաւերժական, անխախտելի մահարձան կանգնեցրեց իր համար: Նա մեռած չէ: Նա ապրում է: Նրա մահը խսկական անմահութիւն է:

Կ.

(С. Петерб. Вѣдомости, № 212, 1900*թ.*)

Տփխիս:

ԳՐԻԳՈՐ ՋԱՆՇԻԵՒԻ ՄԱՍԻՆ

(Ակնարկներ և պատկերներ):

Այս շաբաթ Մոսկւան կորցրեց իր նշանաւոր քաղաքայիններից երկսին — մեռաւ նշանաւոր փաստաբան իշխան Ալէքսանդր Իվանովիչ Ուրուսով և Մոսկւայի իսկական հրապարակախօսներից մէկը — Գրիգոր Աւետովիչ Ջանշիև:

Նրանք մեռան և հողում թաղուած են արդէն, բայց նրանց փայլուն և պայծառ յիշատակը յաւիտեան պիտի մնայ ռուս հասարակութեան գիտակցութեան մէջ: Ահա թէ ի՞նչու ցանկալի է ինձ այդ նշանաւոր հանգուցեալների բնորոշման նւիրել այս իմ, դուցէ թռուցիկ, բայց անկեղծ տողերը: *)

Գ. Ա. Ջանշիևին աւելի քիչ էի ճանաչում, քան հանգուցեալ Ուրուսովին: Անկասկած այս հրապարակախօսի ընդհանուր ժողովրդականութիւնը անհամեմատ պակաս է նշանաւոր փաստաբանի ընդհանուր ժողովրդականութիւնից, բայց հանգուցեալ Ջանշիևը մի այնպիսի մաքուր հոգու, այնպիսի հաճելի ազնւութեան տէր հրապարակախօս էր, որ նրա կորուստը անկեղծ արցունք պիտի յարուցանի ռուս մամուլի բնտանիքում: Ինչոր Ջանշիևը գրում էր, այն թափանցուած էր բարձր, խոր համոզմունքով և համոզ-

*) Իշխան Ուրուսովի մասին գրուած կտորը բաց ենք թողնում:

Ծան. Թարգմ.

մունքի այդ մաքրութիւնը, անկասկածելի անկեղծութիւնը նրա հրապարակախօսական գործունէութեան աչքի ընկնող յատկութիւններն էին կազմում, որպիսի յատկութիւնները շրջապատում էին նրան մի առանձին լուսապսակով և նրան մի առանձին նշանակութիւն էին տալիս։ Յանձին նրա գերեզման իջաւ վերջիներից մէկը այն անձերից, որոնք ոչ մի զիջում չէին անում մեծ բարենորոգումների շրջանը պաշտպանելիս։ Նա ոչ միայն հրապարակախօս էր, այլ — այդ ժամանակաշրջանի իսկական երգիչն էր և նրա հրապարակախօսական գրիչը, նրա ոգևորութիւնը, նրա մաքուր սրտի մաքուր բոցը վերջին տարիներս մի տեսակ զէնքեր էին, որոնցով նա յիշեալ բարենորոգումները պաշտպանում էր տեղացող յարձակումներից.....

Ջանշիևը պատկանում էր այն ռուս ինտելիգէնտ անձերի թւին, որոնք իրանց մասին աղաղակ չեն բարձրացնում, այլ իրանց համար եզերագծում են գործունէութեան մի որոշ շրջան և գործում են այդ շրջանում խաղաղ, առանց աղմուկի, բայց արդիւնաւոր կերպով։ Նրանց զէնքը — հոգու բիւրեղային մաքրութիւնն է։ Դոբրոլիւբովի հետ Ջանշիևը անկասկած կարող է ասել, որ նա մեռնում է, որովհետև «былъ онъ честенъ.....

Но зато родному краю
Буду вѣрно я извѣстенъ».....

Անկասկած, զգալի և սոսկալի կլինէր ապրել, եթէ Ջանշիևի նման անձերի գործունէութիւնը անհետևանք անցնէր կամ հակառակ դէպքում,

անուան համեմատ բարի յիշատակ չթողնէր։ Կարծես ժամանակակից ներկան այդպիսի անձերին «ուղղագիծ» անունն է դրոշմում. տեսէ՛ք, какъ задѣлались, такъ и опочили—ни шагу въ сторону. Մի անգամ հաստատ և սրբութեամբ հաւատալով, նրանք այլ ևս չէին ենթարկւում ժամանակի րոպէական գրաւմունքներին, յիշելով, որ անմահ է միայն յաւիտենականը և յաւիտենական է միայն ճշմարիտ գեղեցիկը։ Եւ այն ժամին, երբ յոյսերը շուրջ թառամում էին, կոպիտ վիրաւորանք ստանալով ժամանակակից, երբ, ակամայից, ցեխի մէջ խարխափող կեանքը շնչասպառ էր լինում գարահոտ գոլորշիացումների հիասթափման մէջ, նրանք առաջւայ նման համարձակւեցին խաղաղ, հաւատով, յուսով և սիրով դարձեալ նոյն տեսակ յոյս կապել պայծառ օրի մօտենալուն, դարձեալ նոյն տեսակ տեսնել լոյսը Աստուծու արեգակի մէջ և բարիքը՝ աստուածային ճշմարտութեան մէջ։ Թո՛ղ Ջանշիևներին նախապէս բնորոշեն «ուղղագիծ մարդ» կոչումով, ցաւալի չէ։ Միշտ այդ ուղղագիծ անձերն են դարերի և կեանքի մի շարք արգելքների միջով առաջ տարել և դարձեալ կտանեն մարդկային մտքի մաքրութիւնը և մարդկային ստեղծագործութեան փայլուն իդէալները։ Ջանշիևը ոյժ ունէր և հոգիներ հրապուրել գիտէր, որովհետև նա իդէալների էր ծառայում, հաւատ ունէր դէպի մարդը, սպասում էր գեղեցկի իրագործմանը երկրում։ Այդ տեսակէտից նա Ալէքսանդր Բ-ի թագաւորութեան մեծ բարենորոգումների անդաւաճան երգիչն էր և այդ բարենորոգումների հիմնական իդէալներին չէր կարող նա

դաւաճանել, առանց իրան, իր հոգեկան ամբողջ կազմակերպութեան դաւաճանելու: Նա համեմատաբար երիտասարդ էր և նրան չէր կարելի «վաթսունականների» շարքը դասել: Բայց նա ապրում էր և մեռաւ աւելի «վաթսունական», քան շատ, այսպէս ասած, «քրոնիկական վաթսունականները», որոնց մասին կարելի է ասել. նրանցից մի քանիսը չկան արդէն, միւսները հեռու են» ինչպէս Սադին մի ժամանակ ասաց:

Այդպէս էին այն մարդոց ձևակերպութեան ընդհանուր գծերը, որոնց անցեալ շաբաթ թաղեցինք: Դէ՞հ լացէ՛ք ամենքդ Մոսկւայի հետ միասին: Թէև Ուրուսով և Զանշիեւ մոսկւացիներ էին, այսպէս ասած, տեղի բնակութեամբ, բայց նրանք պատկանում էին ամբողջ Ռուսաստանին, համարձակն ասեմ— բոլոր մարդկութեան, քանի որ դրանք մարդկութեան ընտիր զօրքի զինուորներ էին: Անկասկած, դրանք իրաւունք ունէին առաջընթաց կամաւորներ կոչւելու այն երիտասարդութեան զօրաբանակի, որոնք կռիւ են մղում լոյսի, հոգու և մտքի ազատութեան համար: Այդ տեսակի ինտելիգէնտ մարտնչողների բաղդը շատ սաստիկ նախանձելի է, որովհետև նրանց մահը մեզ չէ սարսափեցնում, այլ ոգևորում և ուսուցանում է: Երբ Ուրուսովի և Զանշիևի նման մարդոց գերեզման են իջեցնում, հոգւոյդ մէջ ակամայից անմահութեան հաւատ է ծնում: Թո՛ղ օրհնւի դրանց յաւիտենական յիշատակը:

(Новости № 201. 1900 թ.)

Ն. Ռօչ:

ՄԵԾ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԵՐԳԻՉԸ

Իշխան Ուրուսովի յետևից մահը գերեզման տարաւ նաև Գ. Ա. Զանշիևին:

Ինչպէս իշխան Ուրուսովը, նոյնպէս և Գ. Ա. Զանշիեւ 60-ական թւականների մարդիկ էին: Չնայելով նրանց առաջ բացւող փայլուն ասպարէզին, երկուսն էլ իրանց քաղաքացիական կոչումը համարեցին ռուս հասարակութեանը ծառայել ադւոկատուրայի շարքերում:

Նրանց բնոյթը և ձիրքը թէև զանազան էին, սակայն երկուսն էլ միևնոյն գաղափարին էին ծառայում: Իշխան Ուրուսովը ճշմարտութեան և ոտնակոխ եղած իրաւունքի համար մի եռանդուն և կրակոտ մարտնչող էր: Իսկ Գ. Ա. Զանշիեւ որպէս պաշտպան թէև դատաստանական դահլիճում սակաւ էր երևում, բայց իր ոգևորւած պաշտպանողական ճառերով ռուս հասարակութեանը շատ յաճախ էր երևում մամուլի մէջ: Գ. Ա. Զանշիեւ հրապարակախօս-բանաստեղծ էր: Նրա գրչին է պատկանում ամբողջ ընթերցող հասարակութեան յայտնի «Մեծ բարենորոգումների ժամանակաշրջան» մենագիր-պօէման: Այդ գրքի մէջ նա երգեց մեծ բարենորոգումների ժամանակաշրջանը, գրելով ամենայն ճշտութեամբ և գիտնական դոկումենտներին համեմատ: Այդ գրքի իւրաքանչիւր երեսը վկայում է,

որ մարդը ոգևորուած հաւատում էր, թէ մեծ բարենորոգումների ուղիից դուրս ցաւալի կերպով խարխափել ենք սկսում: Գլխաւորապէս Գ. Ա. Ջանշիևի գրքի շնորհիւն է, որ նոր աճող սերունդները ծանօթանում են մեծ բարենորոգումների ժամանակաշրջանի հետ և գիտեն այդ շրջանը. Նրանք ներշնչւում են Ջանշիևի կրքոտ հրաւէրով — սիրել այդ ժամանակաշրջանը, իւրացնել նրա գաղափարները և ծառայել այդ գաղափարներին մեր օրերում:

«Մեծ բարենորոգումների ժամանակաշրջան» գիրքը եօթ հրատարակութիւն ունեցաւ և իւրաքանչիւր հրատարակութիւն մի նոր ապացոյց էր, որ Գ. Ա. Ջանշիևը յաջողեցնում է հասարակութեան մէջ սէր յարուցանել դէպի մեծ բարենորոգորմների ժամանակաշրջանը: Այդ միտքը դրդեց նրան ասպարէզ դուրս գալ իւրաքանչիւր բարենորոգման վերաբերեալ առանձին պատկերագրերով, որոնցից և կազմւած էր 60-ական թւականների մեծ ժամանակամիջոցը: Ջանշիևի «Դատաստանական բարենորոգումների հիմունքները» և նրա մի այլ «Ս. Ի, Զարուդնըյ և դատաստանական բարենորոգում» վերնագրով պատկերագրերը արագութեամբ տարածւեցին և ներկայումս մատենագրական հազւագիւտութիւններ են:

Ճորտերի բարենորոգումը Գ. Ա. Ջանշիևը երգեց իր «Ա. Ն. Ունկօվսկի և ճորտերի ազատութիւն» պատկերագրութեան մէջ: Իւրաքանչիւր անձ այդ գրւածքով ոչ միայն ճորտերի բարենորոգութեան պատմութեան հետ է ծանօթանում, այլ և այդ

բոլորը զգում է և խոնարհւում է դրա առաջ: Գրքի նպատակն է՝ արթնացնել, հոգւով վերակենդանացնել ընթերցողին, որպէսզի վերջինս սկսի հաւատալ մարդոց և ճշմարտութեան յաղթանակին ռուս աշխարհում:

Բացի ծանրակշիռ պատկերագրերից, Գ. Ա. Ջանշիևը իրա յետևից թողել է բրօշիւրների և լրագրական յօդւածների մի ամբողջ շարք: Նրանք բոլորը, առաջինից մինչև վերջինը, ներշնչւած են միևնոյն ջերմ հաւատով դէպի հանգուցեալ Գր. Աւետովիչի սիրած ոտանաւորը —

Какъ бы ночь ни длилась
И небо ни темнѣло.
А все разсвѣта намъ не миновать.

(Россія № 442, 1900 թ.)

Գ. Ա. ՋԱՆՇԻԵՒ

Հեռագիրը մի տխուր լուր հաղորդեց։ Մոսկուայում յանկարծամահ եղաւ Գրիգոր Աւետովիչ Ջանշիեւը, որ քաջ տեղեակ էր «Մեծ բարենորոգումներ»ի փառաւոր շրջանին։ Հանգուցեալի գրչին է պատկանում «Մեծ բարենորոգումների ժամանակաշրջանից» հրաշալի գիրքը։ Ճիշտն ասած, նրան կարելի է «Աղեքսանդր Բ. կայսրի մեծ բարենորոգումների երգիչ» անուանել։ Նրա «Основы судебной реформы», «Страница изъ исторіи судебной реформы Д. Н. Замятинъ» և «С. И. Зарудный и судебная реформа» հեղինակութիւնները, նոյնպէս և նրա «Изъ эпохи великихъ реформъ» ուսումնասիրութիւնները իրանց տեսակներովը դասական (կլասիք) նշանակութիւն ունին։

Գ. Ա. ծնւեց 1851 թւին։ 1874 թւին աւարտեց ուսման ընթացքը Մոսկուայի համալսարանի իրաւաբանական բաժնում։

Հանգուցեալը համալսարանը աւարտելուց յետ իսկոյն սկսեց իր գրական և հրապարակախօսական գործունէութիւնը։

Մինչև իր կեանքի վերջին րոպէն նա «Русск. Вѣдомости» լրագրի հրատարակող-աշխատակից անդամներից մէկն էր և Մոսկուայի շրջանի երդւեալ հաւատարմատարն էր համարւում։

Ջանշիևի 25ամեայ գրական և հասարակական գործունէութեան յոբելեանը ամբողջ ռուս երիտասարդութիւնը կատարեց անցեալ տարի։ Գ. Ա.-ը իրան յատուկ համեստութիւնից դրդուած, խուսափեց յոբելեանի առիթով լինելիք ամենատեսակ մեծարանքներից։ Գ. Ա.-ի մահը մեծ կորուստ է ռուս հասարակութեան համար։

(Бирж. Вѣдомости 1900 г. № 195, 2-е изданіе)

Մահը խլեց մի բարձր տաղանդի տէր, կրակոտ հրապարակախօս և, որ մեծ եռանդով և մեծ պերճախօսութեամբ ժողովրդականացնում էր Մեծ բարենորոգումների շրջանի գործիչների գործունէութիւնը։ Գրիգոր Աւետովիչ Ջանշիեւը անխոնջութեամբ հետևում էր և ոչ մի առիթ բաց չէր թողնում առանց յիշեցնելու 60-ական թւերի այս կամ այն բարենորոգումների մասին, այս կամ այն մեռած կամ դեռ ապրող անձնաւորութեան մասին, որը մասնակցել է այդ բարենորոգումներին։ «Русск. Вѣдомости»ն յանձին Ջանշիեւի ունէր լուսաւոր, մարդասիրական գաղափարների մի զգայուն և արիասիրտ պաշտպան։ Ջանշիեւը հայ լինելով, նա ջերմ կերպով նուիրուած էր իր արիւնակից բազմաչարչար ազգին և միենոյն ժամանակ նա իսկական ռուս մարդ էր, որ ապրում էր մտքի տիրապետների իղձերով։

(Русская Мысль, 1900 е. № 8)

ԳՐԻԳՈՐ ՋԱՆՇԻԵՒ

Յուլիսի 17-ին Մոսկւայում յանկարծամահ եղաւ Գրիգոր Աւետովիչ Ջանշիեւ, որ ռուս հրապարակախօսութեան արժանաւոր ներկայացուցիչներից մէկն էր։ Հանգուցեալը ծնւել էր Տփխիսում հայ ընտանիքի մէջ, 1851 թւի մայիսի 17-ին։ Լազարեան արեւելեան լեզուների ճեմարանի գիմնազիական մասը աւարտելով, նա մտաւ Մոսկւայի համալսարանը, ուր և աւարտեց իրաւաբանական մասը 1874 թւին։ Այդ օրիցն էլ սկսւեց նրա գրականական գործունէութիւնը և անընդհատ շարունակւեց մինչև նրա կեանքի վերջին օրերը։

Ջանշիեւի գրական գործունէութիւնը ամբողջապէս նւիրւած է ռուսաց նորագոյն պատմութեան փառաւոր ժամանակաշրջանի ուսումնասիրութեանը և այդ ժամանակաշրջանը «մեծ բարենրրոգումներ»ն են։ Դիւանական նիւթերի ուսումնասիրութեան վրա հիմնւելով, Գ. Ա.-ը «Աղէքսանդր Բ.-ի օրէնքներ»ի վերաբերեալ մի շարք նկարագիրներ տւեց, որոնք սկզբում տպագրւում էին «Русск. Мысль»-ում և «Вѣстникъ Европы»-ում, իսկ վերջը լոյս տեսան առանձին հրատարակութիւններով — «Страница изъ исторіи судебной реформы. Д. Н. Замятинъ» (М. 1803), «С. И .Зарудный и судебная реформа» (М. 1889), «Основы судебной реформы» (М. 1891).

Բայց ամենամեծ հռչակ վայելում է նրա «Մեծ բարենորոգումների շրջանից» ստւար աշխատութիւնը, որ կարճ ժամանակում 7 անգամ հրատարակւեց։ Ինչպէս հանգուցեալի գրչի տակից բոլոր լոյս տեսածները, նոյնպէս և այդ գիրքը գրւած է մի անսովոր ջերմութեամբ, որի մէջ ինքը՝ հեղինակը խորին հիացմունքով երկրպագում է իր նկարագրած ժամանակաշրջանին և նրա նշանաւոր գործիչներին։

Բացի այդ աշխատութիւններից և բազմաթիւ ամսագրական ու լրագրական յօդւածներից, որոնք վերաբերում են դատաստանական բարենորոգումներին, իրաւունքին, դատաստանական և փաստաբանական գործնական գիտութեանը, Գ. Ա.-ը գրեց «Перлъ Кавказа» Կովկասեան սիրուն ճանապարհորդական նկարագիրները, որ 4 անգամ հրատարակւեց։

Մինչև վերջը Գ. Ա.-ը «Русск. Вѣдомости»ի հրատարակողներից և աշխատակիցներից մէկն էր և համարւում էր Մոսկւայի շրջանի հաւատարմատար. միշտ և ամեն տեղ մնալով նոյն ամբողջացած բնաւորութիւնը, նոյն յաջորդականութեամբ տոկունութեամբ վաթսունական թւականներին նւիրւած անձնաւորութիւնը։

Չէ կարելի մոռանալոյց չանել նաև հանգուցեալի իր հայրենիքին արած ծառայութիւնները։ Ծագումով հայ Գ. Ա.-ը ի հարկէ չէր կարող անտարբերութեամբ վերաբերւել դէպի այն տանջանքներն ու հալածանքները, որ կրում էին նրա համազգիները Տաճկաստանում։ Նրա գրչին են պատկանում բազ

մաթիւ յօդուածներ, որոնց նպատակն էր մեր հասարակութեան մէջ զգացմունք յարուցանել դէպի տաճկահպատակ դժբաղդ հայերը։ Այլև նա հրատարակեց մի գեղեցիկ ժողովածու — «Братская помощь пострадавшимъ армянамъ» *վերնագրով, որ գրական և նիւթական ահագին յաջողութիւն ունեցաւ։*

Գ. Ա.-ի մահը մեծ կորուստ հանդիսացաւ և ռուս հասարակութեան և ռուս հրապարակախօսութեան համար։

(Историческій Вѣстникъ, № 9 годъ 1900)

Գ. Ա. ՋԱՆՇԻԵՒ

(Վախճանուեց Մոսկուայում 1900 թ. յուլիսի 17-ին)։

Ինչպէս արդէն հաղորդեցինք, յուլիսի 17-ին Մոսկուայում վախճանուեց յայտնի հրապարակախօս Գ. Ա. Ջանշիևը։ Նա մեռաւ դեռ ևս բոլորովին ծաղիկ և ապագայ գործունէութեան համար ուժով լի հասակում (ծնուեց 1851 թ.)։

Անկարելի է լրագրական մի թռուցիկ յօդուածով թուել և գնահատել հանգուցեալի բոլոր ծառայութիւնները որպէս մարդու և ամենից առաջ, որպէս հրապարակախօսի և օրէնսգէտի։

Գ. Ա.-ի գործունէութիւնը ամեն կերպ արժանի է ռուս քաղաքակրթութեան ապագայ պատմաբանի ուշադրութեանը։ Մենք ներկայ նկատողութեան մէջ կաշխատենք գոնէ համառօտ գծերով ծանօթացնել ընթերցողներին հանգուցեալի գործունէութեան հետ։

Տփխիսի ծնունդ և ծագումով հայ հանգուցեալ Գ. Ա. Ջանշիևը իր սկզբնական կրթութիւնը ստացաւ Լազարեան ճեմարանում։ Սրանից յետ 1874 թուին աւարտելով Մոսկուայի համալսարանի իրաւաբանական բաժինը, Գ. Ա.-ը իսկոյն և եթ իջաւ գրական ասպարէզ, նոյն թուի հոկտեմբերի 4-ին իր անդրանիկ յօդուածը—«Бѣглыя замѣтки по поводу отчета московскаго совѣта присяжныхъ повѣренныхъ» *տեղաւորելով* «Судебная Газета» *մաս-*

նաղիտական թերթում: Սակայն այդ թերթին երկար չի աշխատակցում և Կատկովի հրաւէրով անցնում է «Московскія Вѣдомости»-ի դատաստանական բաժինը վարելու: Բայց և այդպէս հանգուցեալ Գ. Ա.-ն այստեղ էլ երկար չէ մնում, որովհետև դատաստանական քրոնիկոնի նեղ և անձուկ բաժինը անկարող եղաւ բաւականութիւն տալ նրան, ուստի և «Московскія Вѣдомости»-ի մի քանի աշխատակիցների, գլխաւորապէս Մոսկւայի համալսարանի պրոֆէսորների հետ Ջանշիեւը անցնում է «Русскія Вѣдомости»-ում գործելու:

Գրիգոր Աւետովիչի ուսանողական տարիները համընկեցին 60-ական թւականների հետ, այն մեծ բարենորոգումների շրջանի հետ, երբ սկսաւ զարթել ռուս հասարակութեան ինքնագիտակցութիւնը, երբ ճորտերի ազատութիւն, արդար, ողորմած և արագ դատաստան յայտարարուեց, երբ երդուեալների դատարանը ժողովրդական խղճի արտայայտութիւն ընդունուեց, երբ ինքնավարութեան, համալսարանական աւտոնոմիայի և ազատ տպագրութեան խնդիրները սկսեցին յուզել հասարակութեանը:

Զարմանալի չէ, որ իր կենդանի բնաւորութեամբ և ամեն բանի ձայնակցող հանգուցեալ Ջանշիեւը անկարող լինէր այդ դէպքերի մօտով անցնել և անուշադիր թողնել նրանց և իր սեպհականը չդնել նրանց մէջ: Գ. Ա. Ջանշիեւին կարելի է 60-ական թւերի պատմաբան անւանել: Իւրաքանչիւր, ով կամենում է ծանօթանալ 60-ական թւականների լուսաւոր ուղղութեան հետ, նրա «Մեծ բարենորոգումների ժամանակաշրջան» աշխատութիւնը ներկայանում է գրասեղանի անհրաժեշտ մի գիրք, որ անչափ կերպով մեկնաբանում է մեծ բարեփոխումների և նրա ժամանակակից գործիչների շրջանը:

Այդ գիրքը բաղկացած է Գ. Ա. Ջանշիեւի մի շարք յօդւածներից, որոնք իրար հետ միացած են մի ընդհանուր գաղափարով, այնէ՝ 60-ական թւերի ազատարար—մարդասիրական շարժումների գաղափարով: Այդ «պատմական տեղեկագրեր»ը շօշափում են ճորտերի ազատութեան, մարմնական պատիժները վերացնելու, համալսարանական ինքնավարութեան, զեմստվոյի, ցենզուրայի բարենորոգման, հրապարակական և երդուեալ դատաւորների, զինուորական բարենորոգման և քաղաքային ինքնավարութեան խնդիրները: «Մեծ բարենորոգումների ժամանակաշրջան» գիրքը առաջին անգամ լոյս տեսաւ հեղինակի alma matris համալսարանական տօնի օրը՝ 1892 թ. յունւարի 12-ին: Այդ գիրքը այնպիսի յաջողութիւն ունեցաւ, որ ամենակարճ ժամանակում, այսինքն՝ մարտի 5-ին արդէն երկրորդ անգամ հրատարակելու կարիք զգացւեց: Թէ ի՞նչ հետաքրքրութիւն զարթեցրեց «Մեծ բարենորոգումների ժամանակաշրջան» գրւածքը, ամենալաւ ապացոյցը այն հանգամանքն էր, որ այդ գիրքը 1892-ից մինչև 1898 թիւը՝ 5 տարւայ ընթացքում լոյս տեսաւ 7 հրատարակութեամբ:

Զթւելով հանգուցեալի բոլոր մենագրութիւնները, այստեղ առաջ ենք բերում նրանցից գլխաւորները միայն. «О новомъ и старомъ направленіи

кассаціонной практики», «Веденіе неправыхъ судъ», «Вопросъ о литературной конвенціи съ Франціей съ точки зрѣнія юридической», «О защитѣ на предварительномъ слѣдствіи», «Унковскій и освобожденіе крестьянъ», «Судъ надъ судомъ присяжныхъ», «Въ Европѣ» և այլն և այլն: Հանգուցեալ Գ. Ա.ն Կովկասին նւիրել է «Перлъ Кавказа» գրւածքը, որի նորից հրատարակւելու մասին մօտ ժամանակներումս հրատարակւած էր մեր լրագրում:

Ռուս հրապարակախօսութեան շահերին ծառայելով, Գ. Ա.-ը անկարող էր անմասն, անուշադիր մնալ դէպի իր ազգակից հայերի վիճակն ու շահերը: Նա մի շարք հրատարակութիւնների միջոցով (Армянскій вопросъ въ Турціи, положеніе Армянъ въ Турціи) ծանօթացրեց ռուս հասարակութեանը հայերի ժամանակակից դրութեան հետ Տաճկաստանում և հայ ժողովրդի պատմական անցեալի հետ:

(Тифлискій Листокъ, № 169. годъ 1900.)

Սուխումում յանկարծ վախճանւեց Գրիգոր Աւետովիչ Ջանշիեւ: Այդ հրապարակախօսի անունը կապւած է մեր դատաստանական բարենորոգումների հետ: Սակայն ոչ թէ այն ժամանակաշրջանի հետ, երբ այդ վերանորոգումները դեռ նոր էին մտցնւում և սուր յարձակումների տեղիք չէին տալիս մամուլի մէջ, ոչ. այլ նրա անունը կապւած է այն ժամանակաշրջանի հետ, որի ընթացքում հարկաւոր էր

պաշտպան հանդիսանալ բարենորոգումներին այն արշաւանքի դէմ, որ կատարւում էր արգելք դնելու երդւեալ դատաւորների մասնակցութեանը դատական գործում: Գ. Ա.-ը կրքոտ էր և անխոնջ. Նա այդ վերանորոգումներին է նւիրել իր հետևեալ հեղինակութիւնները. «Основы судебной реформы», «С. И. Зарудный и судебная реформа» և այլն: Գ. Ա.-ը ծնւեց 1851 թւին, իսկ 1874-ին աւարտեց իրաւաբանական մասի դասընթացը Մոսկւայի համալսարանում: Գ. Ա.-ը լինելով երդւեալ հաւատարմատար, միենոյն ժամանակ նա «Русск. Вѣдомости» լրագրի գործունեայ աշխատակիցներից մէկն էր: Անցեալ տարի նրա քառասնհինգամեայ հրապարակախօսական գործունէութեան յոբելեանի տօնախմբութեան ժամանակ բաւական պարզ արտայայտւեցան այն համակրանքները, որոնց նա կարողացել էր վաստակել:

(Новое Время, № 8761. 1900 годъ).

LENIN adьna Центр. Библиотека № 3990 им. ЛЕНИНА ...gezi qutubxana

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССРА им. А. Мясникяна

Հայաստանի Ազգային գրադարան
NL0425117

14281